

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով արդյունաբերական արտադրության զարգացման համար պայմանների ստեղծման կարեւորությունը,

Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում տնտեսության զարգացման, արտադրության ընդլայնման, կառավարման եւ գիտատեխնիկական առաջընթացի արդյունավետության բարձրացման խթանման, ապրանքային շուկաներում ռեսուրսների օպտիմալ բաշխման ապահովման նպատակով,

ցանկանալով ապահովել պայմաններ՝ Կողմերի պետությունների տնտեսությունների կայուն եւ արդյունավետ զարգացման համար, ինչպես նաեւ՝ Կողմերի միջեւ փոխադարձ առեւտրի եւ բարեխիղճ մրցակցության զարգացմանը նպաստող պայմաններ,

առաջնորդվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող նորմերով եւ սկզբունքներով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն Համաձայնագրի առարկան սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքում արդյունաբերական ապրանքների առնչությամբ լրավճարների տրամադրման միասնական կանոնների սահմանումն է:

2. Սույն Համաձայնագրի նորմերով կարգավորվում է լրավճարների տրամադրման գործընթացը, այդ թվում՝ այնպիսի ծառայություններ տրամադրելու կամ ստանալու դեպքում,

որոնք անմիջականորեն կապված են ապրանքների արտադրության, իրացման եւ սպառման հետ:

3. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի՝

որպես որեւէ Կողմին ներկայացվող պահանջ՝ այնպիսի տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ, որոնց բացահայտումը, ըստ տվյալ Կողմի, կհակասի իր անվտանգության էական շահերին կամ

որպես խոչընդոտ որեւէ Կողմի համար՝ այնպիսի գործողություններ ձեռնարկելու հարցում, որոնք տվյալ Կողմն անհրաժեշտ կհամարի իր անվտանգության էական շահերը պաշտպանելու համար՝

ա) ճեղքվող նյութերի կամ այն նյութերի առումով, որոնցից դրանք արտադրվում են,

բ) զենքի, զինամթերքի եւ ռազմամթերքի, ինչպես նաեւ այլ ապրանքների եւ նյութերի մշակման, արտադրության եւ առետրի առումով, որոնք ստեղծվում են ուղղակիորեն կամ անուղղակիորեն զինված ուժերին մատակարարելու նպատակով,

գ) եթե դրանք ձեռնարկվում են պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերություններում առաջացած այլ արտակարգ իրավիճակներում կամ

որպես խոչընդոտ որեւէ Կողմի համար՝ ամբողջ աշխարհում խաղաղության եւ միջազգային անվտանգության պահպանման նպատակով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն իր պարտավորությունների կատարմանը նպատակաուղղված ցանկացած գործողություն ձեռնարկելու հարցում:

4. Կողմերի՝ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն ծագող պարտավորությունները չեն տարածվում երրորդ երկրների հետ Կողմերի իրավահարաբերությունների վրա:

5. Սույն Համաձայնագրի գործողությունը չի տարածվում սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված լրավճարների վրա, որոնք տրամադրվել են Կողմերի պետությունների տարածքում մինչեւ սույն Համաձայնագիրը գործողության մեջ դնելը:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հետեւյալ սահմանումները.

1) «վարչատարածքային միավորներ»՝ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտները (տեղական ինքնակառավարման մարմինները) եւ (կամ) Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության շրջանները՝ (ներառյալ Մինսկ, Աստանա եւ Ալմաթի քաղաքները),

2) «ազգային տնտեսության ճյուղ»՝ Կողմի պետությունում նույնանման ապրանքի բոլոր արտադրողները կամ այն արտադրողները, որոնց մասնաբաժինը Կողմի պետությունում նույնանման ապրանքի արտադրության ընդհանուր ծավալում կազմում է 25 տոկոսից ոչ պակաս,

3) «լրավճար»՝ ֆինանսական աջակցություն, որը ցուցաբերում է Կողմի պետության՝ լրավճար տրամադրող մարմինը (կամ Կողմի պետության կողմից լիազորված կառույցը), ինչի արդյունքում ստեղծվում են (ապահովվում են) առավելություններ, եւ որն իրականացվում է հետեւյալ կերպ.

դրամական միջոցների ուղղակի փոխանցման միջոցով (օրինակ՝ անվերադարձ տրամադրվող փոխատվությունների, վարկերի կամ կանոնադրական կապիտալում մասնաբաժին ձեռք բերելու կամ այն մեծացնելու կամ այդպիսի միջոցներ փոխանցելու պարտավորության միջոցով (օրինակ՝ վարկերի երաշխիքներ),

այն վճարների գանձումից ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու միջոցով, որոնք պետք է մուտքագրվեին՝ որպես Կողմի պետության եկամուտ (օրինակ՝ հարկային արտոնությունները, պարտքի դուրսգրումը): Ընդ որում, արտահանվող ապրանքը այն տուրքերից եւ հարկերից ազատելը, որոնք գանձվում են ներքին սպառման համար նախատեսված նույնանման ապրանքի դեպքում, կամ այդպիսի տուրքերը եւ հարկերը նվազեցնելը, կամ այդպիսի տուրքերը եւ հարկերը վերադարձնելը՝ փաստացի հավելագրված գումարը չգերազանցող չափով, չի դիտարկվում որպես լրավճար,

ապրանքների կամ ծառայությունների տրամադրման միջոցով, բացառությամբ ընդհանուր ենթակառուցվածքի պահպանման եւ զարգացման համար նախատեսված ապրանքների կամ ծառայությունների,

ապրանքներ ձեռք բերելու միջոցով,

կամ եկամուտների կամ գների պահպանման ցանկացած այլ ձեւ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն է ունենում Կողմերից յուրաքանչյուրի պետության տարածքից արդյունաբերական ապրանքի ներմուծման ծավալների կրճատման կամ Կողմերից

յուրաքանչյուրի պետության տարածք ապրանքի արտահանման ծավալների մեծացման վրա, ինչի արդյունքում ապահովվում է առավելություն,

4) «արդյունաբերական ապրանքներ»՝ ԵվրԱզԷՍ-ի Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) 25 - 97 ապրանքախմբերում դասակարգվող ապրանքներ, ինչպես նաև՝ ձուկ եւ ձկնամթերք, բացառությամբ այն ապրանքների, որոնք դասակարգվում են ԱՏԳ ԱԱ-ի 2905 43, 2905 44 ենթադիրքերի, 3301, 3501 - 3505 դիրքերի, 3809 10, 3824 60 ենթադիրքերի, 4101 - 4103, 4301, 5001 - 5003, 5101 - 5103, 5201 - 5203, 5301, 5302 դիրքերի համաձայն¹,

5) «լրավճար տրամադրող մարմին»՝ Կողմերի պետությունների մեկ կամ մի քանի պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին, որը որոշումներ է կայացնում լրավճարների տրամադրման հարցերով :

Լրավճար տրամադրող մարմինը ցանկացած այլ կազմակերպության կարող է հանձնարարել կամ պատվիրակել իր վրա դրված մեկ կամ մի քանի գործառույթի իրականացումը՝ կապված լրավճարների տրամադրման հետ (այսուհետ՝ լիազորված գործակալ): Լիազորված գործակալի այդպիսի գործողությունները դիտարկվում են որպես լրավճար տրամադրող մարմնի գործողություններ:

Կողմի պետության ղեկավարի՝ լրավճարներ տրամադրելուն նպատակաուղղված ակտերը դիտարկվում են որպես լրավճար տրամադրող մարմնի գործողություններ:

6) «ազգային տնտեսության ճյուղին հասցված վնաս»՝ ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս, ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ կամ ազգային տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի զգալի դանդաղում:

¹ 2905 43 ենթադիրք՝ մանիտ, 2905 44 ենթադիրք՝ սորբիտ, 3301 դիրք՝ եթերայուղեր, 3501 - 3505 դիրքեր՝ սպիտակուցային նյութեր, ձեւափոխված օսլաներ, սոսինձներ, 3809 10 ենթադիրք՝ մակերեսների մշակման համար նյութեր, 3824 60 ենթադիրք՝ սորբիտոլ, այլ մթերքներ, 4101 - 4103 դիրքեր՝ մորթիներ եւ կաշվե հումք, 4301 դիրք՝ չմշակված մորթի, 5001 - 5003 դիրքեր՝ մետաքսի հումք եւ մետաքսի թափոններ, 5101 - 5103՝ բուրդ եւ կենդանիների մազ, 5201 - 5203 դիրքեր՝ բամբակի հումք, բամբակի թափոններ, բամբակի մանրաթել՝ գզած կամ սանդերքագզած, 5301 դիրք՝ վուշի հումք, 5302 դիրք՝ կանեփաթելի հումք:

Ապրանքների ներկայացված նկարագրությունը պարտադիր չէ, որ ամբողջական լինի:

Ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը ազգային տնտեսության ճյուղի իրավիճակի՝ ապացույցներով հաստատված վատթարացումն է, որն այն Կողմի պետության տարածքից ապրանքի ներմուծման հետեւանք է, որն այդ ապրանքի արտադրության, փոխադրման, պահպանման ժամանակ լրավճար է տրամադրել, եւ արտահայտվում է Կողմի պետության տարածքում նույնանման ապրանքի արտադրության եւ իրացման ծավալների կրճատմամբ, այդպիսի ապրանքի արտադրության եկամտաբերության նվազմամբ, ապրանքային պաշարների, զբաղվածության, աշխատավարձի մակարդակի եւ տվյալ ճյուղում ներդրումների մակարդակի վրա ունեցած բացասական ազդեցությամբ:

Ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգը ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու՝ ապացույցներով հաստատված անխուսափելիությունն է.

7) «նույնանման ապրանք»՝ ապրանք, որն ամբողջությամբ նույնական է այն ապրանքին, որի արտադրության, Կողմի պետության տարածքից արտահանման կամ փոխադրման ժամանակ կիրառվել է առանձնահատուկ լրավճար, կամ այդպիսի ապրանքի բացակայության դեպքում՝ այլ ապրանք, որի հատկանիշները նման են այն ապրանքի հատկանիշներին, որի արտադրության, Կողմի պետության տարածքից արտահանման կամ փոխադրման ժամանակ կիրառվել է առանձնահատուկ լրավճար,

8) «իրավասու մարմին»՝ Կողմի պետության՝ պետական իշխանության մարմին, որը պատասխանատու է քննություն իրականացնելու համար,

9) «լրավճար ստացողը»՝ ապրանքի արտադրողը, որը լրավճարից օգուտ ստացողն է:

Հոդված 3

Առանձնահատուկ լրավճարներ

1. Որոշելու համար, թե արդյո՞ք լրավճարն առանձնահատուկ է արդյունաբերական ձեռնարկության կամ արդյունաբերության ճյուղի կամ արդյունաբերական ձեռնարկությունների կամ արդյունաբերության ճյուղերի խմբի (այսուհետ սույն Համաձայնագրում՝ որոշակի ձեռնարկություններ) համար այն տարածքի սահմաններում, որտեղ լրավճար տրամադրող մարմինն իրավասություններ ունի, կիրառվում են հետեւյալ սկզբունքները.

1.1 եթե լրավճար տրամադրող մարմինը կամ այն իրավական ակտը, որի համաձայն գործում է լրավճար տրամադրող մարմինը, լրավճարից օգտվելու հնարավորություն հստակ

տրամադրում է միայն որոշակի ձեռնարկությունների, ապա նման լրավճարը դիտարկվում է որպես առանձնահատուկ՝ պայմանով, որ արդյունաբերական ձեռնարկությունների խմբի կամ արդյունաբերության ճյուղերի խմբի մեջ մտնում են լրավճար տրամադրող մարմնի պետության տարածքում ոչ բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները կամ արդյունաբերության ճյուղերը,

1.2 եթե լրավճար տրամադրող մարմինը կամ այն իրավական ակտը, որի համաձայն գործում է լրավճար տրամադրող մարմինը, սահմանում է օբյեկտիվ չափորոշիչներ կամ պայմաններ², որոնց համաձայն որոշվում է լրավճարներ ստանալու իրավունքն ու դրանց չափը, ապա լրավճարն առանձնահատուկ չի համարվում՝ պայմանով, որ այն ստանալու իրավունքն առաջանում է ինքնաբերաբար, եւ որ նման չափորոշիչները եւ պայմանները խստորեն պահպանվում են: Չափորոշիչներն ու պայմանները պետք է հստակ կերպով նախատեսվեն օրենքով, հանձնարարականով, իրավական ակտով կամ այլ պաշտոնական փաստաթղթերով այնպես, որ դրանք հնարավոր լինի ստուգել:

1.3 եթե անկախ նրանից, որ 1.1 եւ 1.2 ենթակետերում նշված սկզբունքների կիրառման արդյունքում լրավճարը թվում է ոչ առանձնահատուկ, հիմքեր կան ենթադրելու, որ այն իրականում հավանաբար առանձնահատուկ է, ապա կարող են հաշվի առնվել այլ գործոններ: Այդպիսի գործոնների թվին են պատկանում.

լրավճարի օգտագործումը սահմանափակ թվով որոշակի ձեռնարկությունների կողմից,
լրավճարի արտոնյալ օգտագործումը որոշակի ձեռնարկությունների կողմից,
լրավճարների՝ անհամաչափորեն մեծ գումարների տրամադրումը որոշ ձեռնարկությունների,
ինչպես նաեւ հայեցողություն դրսեւորելու եղանակը, որի իրավունքն ունի լրավճար տրամադրող մարմինը՝ լրավճար տրամադրելու մասին որոշում ընդունելիս³:

² Այս համատեքստում օբյեկտիվ չափորոշիչներն ու պայմանները նշանակում են այն չափորոշիչները, որոնք չեզոք են, որոշ ձեռնարկությունների համար առավելություններ չեն ենթադրում՝ այլ ձեռնարկությունների հետ համեմատությամբ, բնույթով տնտեսական են եւ կիրառման եղանակով՝ հորիզոնական, ինչպես օրինակ՝ զբաղվածություն ունեցողների թիվը կամ ձեռնարկությունների չափը:

³ Այս առումով պետք է, մասնավորապես, հաշվի առնվեն լրավճար ստանալու համար ներկայացվող հայտերը մերժելու կամ հաստատելու հաճախականության մասին տեղեկությունները եւ համապատասխան որոշումների հիմնավորումները:

Այս ենթակետը կիրառելիս հարկ է հաշվի առնել տնտեսական գործունեության դիվերսիֆիկացման մակարդակն այն տարածքի սահմաններում, որտեղ լրավճար տրամադրող մարմինն ունի իրավասություններ, ինչպես նաև՝ այն ժամանակահատվածի տեսողությունը, որի ընթացքում գործում է այդ լրավճարը:

2. Լրավճարը, որն օգտագործելու հնարավորություն ունեն միայն նշված այնպիսի աշխարհագրական շրջանում տեղակայված որոշակի ձեռնարկությունները, որը կազմում է այն տարածքի մաս, որի սահմաններում լրավճար տրամադրող մարմինն իրավասություններ ունի, համարվում է առանձնահատուկ: Ենթադրվում է, որ Կողմի պետության պետական մարմնի կողմից այն ամբողջ տարածքի սահմաններում գործող հարկերի դրույքաչափերի սահմանումը կամ փոփոխումը, որտեղ այն ունի իրավասություններ, չի դիտարկվում որպես առանձնահատուկ լրավճար:

3. Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի դրույթներով կարգավորվող ցանկացած լրավճար դիտարկվում է որպես առանձնահատուկ:

4. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ առանձնահատուկ լինելու փաստի հաստատումը պետք է հիմնվի լրավճարի՝ առանձնահատուկ լինելու մասին ապացույցների վրա:

Հոդված 4

Արգելված լրավճարներ

1. Արգելվում են լրավճարների հետեյալ տեսակները.

1.1 արտահանման լրավճարներ՝ լրավճարներ, որոնց տրամադրումը՝ որպես միակ պայման կամ պայմաններից մեկը, կապված է⁴ ապրանքն այդ լրավճարը տրամադրող Կողմի պետության տարածքից ցանկացած մյուս Կողմի պետության տարածք արտահանելու արդյունքների հետ,

⁴ Կապված է ասելով հասկացվում է նաև այն փաստերի առկայությունը, որոնք վկայում են այն մասին, որ լրավճարի տրամադրումը, իրավաբանորեն պայմանավորված չլինելով լրավճարը տրամադրող Կողմի պետության տարածքից ապրանքների արտահանման արդյունքներով, իրականում կապված է փաստացի կամ ակնկալվող արտահանման կամ արտահանումից ստացվող հասույթի հետ: Ինքնին այն փաստը, որ լրավճար տրամադրվում է արտահանում իրականացնող տնտեսվարող սուբյեկտի, չի կարող ծառայել դա արտահանման արդյունաբերական լրավճար համարելու հիմք:

1.2 փոխարինման լրավճարներ՝ լրավճարներ, որոնց տրամադրումը՝ որպես միակ պայման կամ պայմաններից մեկը, կապված է ⁵ այն ապրանքների օգտագործման հետ, որոնք ծագում են լրավճարը տրամադրող Կողմի պետության տարածքից:

2. Այն դեպքում, երբ առանձնահատուկ լրավճար տրամադրելու հետեւանքը ցանկացած Կողմի պետության, բացառությամբ այդ լրավճարը տրամադրած պետության, ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելն է, այդ լրավճարը համարվում է արգելված լրավճար ⁶:

3. Կողմերը չեն պահպանում եւ չեն սահմանում այնպիսի միջոցներ, որոնք կիրառվում են Կողմի պետության լրավճար տրամադրող մարմնի նորմատիվ իրավական ակտի կամ նորմատիվ ակտի հիման վրա, որոնք անհրաժեշտ է պահպանել՝ առանձնահատուկ լրավճարներ ստանալու համար, եւ որոնցով պահանջվում է.

3.1 գնումների իրականացում կամ տնտեսվարող սուբյեկտի կողմից այնպիսի ապրանքների օգտագործում, որոնք ծագում են միջոցը սահմանած Կողմի պետության տարածքից կամ Կողմի պետության՝ լրավճար տրամադրող մարմնի կողմից նշված ցանկացած տեղական աղբյուրից անկախ այն բանից, թե արդյոք սահմանվում են որոշակի ապրանքներ, դրանց ծավալը կամ արժեքը, կամ դրանց տեղական արտադրության ծավալի կամ արժեքի մասնաբաժինը,

3.2 որպեսզի ցանկացած Կողմի տարածքից ներմուծվող ապրանքների գնումը կամ օգտագործումը տնտեսվարող սուբյեկտի կողմից սահմանափակվի այն քանակությամբ, որը կապված է այդ տնտեսվարող սուբյեկտի կողմից արտահանվող այն ապրանքների ծավալների կամ արժեքի հետ, որոնք ծագում են միջոցը սահմանած Կողմի պետության տարածքից, կամ որոնցով սահմանափակվում է.

3.3 տնտեսվարող սուբյեկտի կողմից ցանկացած Կողմի պետության տարածքից այն ապրանքների ներմուծումը, որոնք օգտագործվում են դրա տեղական արտադրության մեջ կամ առնչություն ունեն դրա տեղական արտադրության հետ, այդ թվում՝ պայմանավորված միջոցը սահմանած Կողմի պետության տարածքից ծագող այն ապրանքների ծավալով կամ արժեքով,

⁵ «Կապված է» բառը մեկնաբանվում է այնպես, ինչպես սույն հոդվածի 1.1 ենթակետում:

⁶ Ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելը պետք է ապացուցվի սույն Համաձայնագրի Հավելված 2-ի դրույթների համաձայն:

որոնք այդ տնտեսվարող սուբյեկտի կողմից արտահանվում են ցանկացած Կողմի պետության տարածք,

3.4 տնտեսվարող սուբյեկտի կողմից ցանկացած Կողմի պետության տարածքից այն ապրանքների ներմուծումը, որոնք օգտագործվում են դրա տեղական արտադրության մեջ կամ առնչություն ունեն դրա տեղական արտադրության հետ՝ ցանկացած Կողմի պետության արժույթից տնտեսվարող սուբյեկտի օգտվելու հնարավորությունը սահմանափակելու միջոցով՝ այդ արժույթով մուտքերի՝ ձեռնարկությանը հասանելիք ծավալով,

3.5 տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքների արտահանումը ցանկացած Կողմի պետության տարածք կամ ցանկացած Կողմի պետության տարածքում տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքների վաճառքը՝ պայմանավորված ապրանքները, դրանց ծավալը կամ արժեքը որոշակիացնելով կամ այդ տնտեսվարող սուբյեկտի կողմից իրականացվող տեղական արտադրության ծավալի կամ արժեքի մասնաբաժնով:

4. Արգելվում են այն առանձնահատուկ լրավճարները, որոնց տրամադրումը հանգեցնում է ցանկացած Կողմի շահերի լուրջ ոտնահարման: Կողմի շահերը լրջորեն ոտնահարվում են այն ժամանակ, երբ առանձնահատուկ լրավճար տրամադրելու հետեւանքով տեղի է ունենում.

4.1 լրավճար տրամադրող Կողմի⁷ պետության շուկայից նույնանման ապրանքի դուրսմղում կամ լրավճար տրամադրող Կողմի պետության շուկա այն նույնանման ապրանքի արտահանման աճի տեմպերի զսպում, որը ծագում է ցանկացած Կողմի պետության տարածքից,

2 երրորդ Կողմի պետության շուկայից նույնանման ապրանքի դուրսմղում կամ երրորդ Կողմի պետության տարածք այն նույնանման ապրանքի արտահանման աճի տեմպերի զսպում, որը ծագում է ցանկացած Կողմի պետության տարածքից,

4.3 այն ապրանքի գնի զգալի նվազեցում, որի արտադրության, փոխադրման կամ լրավճար տրամադրող Կողմի պետության տարածքից արտահանման ժամանակ օգտագործվել է առանձնահատուկ լրավճար՝ մյուս Կողմի պետության տարածքից ծագող նույնանման ապրանքի գնի համեմատությամբ՝ ցանկացած Կողմի պետության միեւնույն շուկայում կամ

⁷ Այստեղ եւ այսուհետ՝ սույն Համաձայնագրում լրավճար տրամադրող Կողմ ասելով հասկացվում է այն Կողմը, որի՝ լրավճար տրամադրող մարմինը տրամադրում է արդյունաբերական լրավճար:

գների աճի տեմպերի զգալի զսպում, գների անկում կամ կորցված վաճառքներ՝ միեւնույն շուկայում,

4.4 շահերի լուրջ ոտնահարման առկայությունը որոշվում է սույն Համաձայնագրի Հավելված 2-ի դրույթների համաձայն:

5. Կողմերի պետությունների տարածքում չեն տրամադրվում եւ չեն պահպանվում արգելված լրավճարները՝ ներառյալ սույն Համաձայնագրի Հավելված 1-ում նշված լրավճարները, եւ սույն Հոդվածի 3-րդ կետում նշված միջոցները:

6. Բոլոր այն դեպքերում, երբ ցանկացած Կողմ հիմքեր ունի կարծելու, որ մյուս Կողմի պետության՝ լրավճար տրամադրող մարմինը տրամադրում է սույն Հոդվածի 1.1, 1.2, 4.1, 4.2, 4.3 ենթակետերում նշված արգելված լրավճարներ եւ (կամ) սահմանում է սույն հոդվածի 3-րդ կետում նշված միջոցներ, այդ Կողմն իրավունք ունի դիմելու մյուս Կողմին՝ այդ արգելված լրավճարները կամ միջոցները չեղյալ հայտարարելու վերաբերյալ խորհրդակցություններ անցկացնելու խնդրանքով:

7. Եթե 6-րդ կետում նշված խորհրդակցություններն անցկացնելու վերաբերյալ ծանուցումը պաշտոնական դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում Կողմերը փոխհամաձայնություն ձեռք չեն բերում, ապա գոյություն ունեցող տարածայնությունները կարգավորվում են սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն: Եթե սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն իրականացված՝ վեճերի կարգավորման ընթացակարգի արդյունքներով որոշում է կայացվում այն մասին, որ Կողմերից մեկը տրամադրում է սույն Հոդվածի 1.1, 1.2, 4.1, 4.2, 4.3 ենթակետերում նշված արգելված լրավճարներ եւ (կամ) սահմանում է սույն Հոդվածի 3-րդ կետում նշված միջոցներ, ապա այդ Կողմն անհապաղ ու անվերապահորեն չեղյալ է հայտարարում այդպիսի արգելված լրավճարները կամ սույն Հոդվածի 3-րդ կետում նշված միջոցները՝ անկախ այն բանից, թե արդյո՞ք այդ արգելված լրավճարների կամ միջոցների հետեւանքով վնաս է հասցվել մյուս Կողմերի պետությունների ազգային տնտեսություններին, եւ այդ արգելված լրավճարի առնչությամբ սահմանում է փոխհատուցման միջոց՝ սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի 6-12 կետերի համաձայն:

8. Սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի 2-րդ կետում նշված՝ սույն Համաձայնագրի Արձանագրությունն (այսուհետ՝ Արձանագրություն) ուժի մեջ մտնելու օրվանից ի վեր այն առանձնահատուկ լրավճարները, որոնց միջոցով, Արձանագրությամբ սահմանված չափորոշիչների համաձայն, սահմանափակվում, վերացվում կամ թույլ չի տրվում

մրցակցությունը համապատասխան ապրանքային շուկայում, եւ որոնք բացասական ազդեցություն են ունենում Կողմերի միջեւ առեւտրի վրա, արգելված են:

9. Կողմերի պետությունների՝ լրավճար տրամադրող մարմիններն իրավասու են տրամադրելու սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածով նախատեսված լրավճարներ՝ սահմանված անցումային շրջանի ընթացքում:

Հոդված 5

Թույլատրելի լրավճարներ

1. Այն լրավճարները, որոնք չեն համարվում առանձնահատուկ՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի դրույթների համաձայն, եւ չեն համարվում արգելված՝ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի դրույթների համաձայն, ընդունվում են որպես լրավճարներ, որոնց տրամադրումը չի խաթարում փոխադարձ առեւտուրը Կողմերի պետությունների միջեւ : Կողմերն իրավունք ունեն տրամադրելու այդպիսի լրավճարներ առանց սահմանափակումների, եւ այդ լրավճարների առնչությամբ փոխհատուցման միջոցների կիրառման, պատասխան միջոցների կիրառման կամ լրավճարներ տրամադրելու արգելքի վերաբերյալ սույն Համաձայնագրի նորմերը չեն գործում:

2. Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի դրույթների համաձայն առանձնահատուկ համարվող լրավճարները, որոնք, սակայն, ըստ Կողմերի, չեն խաթարում փոխադարձ առեւտուրը, հիմք չեն ծառայում փոխհատուցման միջոցներ սահմանելու համար՝ սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթների համաձայն: Այդպիսի լրավճարների համապարփակ ցանկը ներկայացված է սույն Համաձայնագրի 4-րդ հավելվածում:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի դրույթների կատարումը

Մաքսային միության Հանձնաժողովն ապահովում է սույն Համաձայնագրի դրույթների կատարման վերահսկողություն՝ սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածում նշված լիազորությունների շրջանակներում:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում Կողմերը Մաքսային միության Հանձնաժողովին տեղեկացնում են սույն

Համաձայնագրի դրույթների կատարման համար պատասխանատու իրենց լիազոր մարմինների մասին:

Հոդված 7

Փոխհատուցման միջոցների սահմանումը եւ կիրառումը

1. Յանկացած Կողմի պետության իրավասու մարմին իրավունք ունի իրականացնելու քննություն՝ սույն Համաձայնագրի դրույթներին մյուս Կողմերի պետությունների տարածքում տրամադրվող լրավճարների համապատասխանության վերաբերյալ կամ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետում նշված միջոցները մյուս Կողմերի կողմից կիրառելու հարցի վերաբերյալ: Քննություն նախաձեռնող իրավասու մարմինը Կողմերին տեղեկացնում է քննությունն սկսելու մասին: Կողմերի պետությունների իրավասու մարմիններն իրավունք ունեն պահանջելու քննության ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ:

2. Այն դեպքում, երբ քննություն իրականացնելու արդյունքում իրավասու մարմինը պարզում է, որ մյուս Կողմի պետության՝ լրավճար տրամադրող մարմինը առանձնահատուկ լրավճար է տրամադրում, եւ այդ առանձնահատուկ լրավճարը վնաս է հասցնում այն Կողմի պետության ազգային տնտեսության ճյուղին, որի իրավասու մարմինը քննություն է իրականացնում, այն կարող է այդ Կողմին փոխանցել փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմում: Փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմումը պետք է ներառի լրավճարի՝ սույն Համաձայնագրի դրույթների հետ անհամատեղելիության վերաբերյալ գոյություն ունեցող ապացույցների նկարագրությունը:

3. Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից հետո այն դեպքում, երբ իրականացված քննության արդյունքում իրավասու մարմինը պարզում է, որ մյուս Կողմի՝ լրավճար տրամադրող մարմինն առանց Մաքսային միության Հանձնաժողովի հաստատման առանձնահատուկ լրավճար է տրամադրում, այն կարող է այդ Կողմին փոխանցել փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմում: Փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմումը պետք է ներառի լրավճարի՝ սույն Համաձայնագրի դրույթների հետ անհամատեղելիության վերաբերյալ գոյություն ունեցող ապացույցների նկարագրությունը:

4. Փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ստացած Կողմը պետք է դիտարկի այդ դիմումը երկու ամիսը չգերազանցող ժամկետում: Այն դեպքում, երբ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ստացած Կողմը համաձայն չէ դիմումի բովանդակության հետ,

փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմում ներկայացրած Կողմն իրավասու է նախաձեռնելու վեճերի կարգավորման ընթացակարգ՝ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն:

5. Փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումը կարող է բավարարվել կամավոր հիմունքներով դիմումը ստացած Կողմի կողմից դիմումը դիտարկելու ժամանակահատվածում, կամ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն վեճերի կարգավորման արդյունքների հիման վրա:

6. Այն Կողմը, որն ստացել է դիմում՝ փոխհատուցման այնպիսի միջոց կիրառելու մասին, որի իրավաչափությունն այդ Կողմն ընդունել է կամավոր հիմունքներով կամ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն վեճերի կարգավորման արդյունքների հիման վրա, 30 օրացուցային օրվա ընթացքում սահմանում է փոխհատուցման միջոց՝ դիմումի համաձայն:

7. Փոխհատուցման միջոցը գոյանում է տրամադրված լրավճարի⁸ գումարից եւ այդ դրամական միջոցները (գույքը) օգտագործելու ամբողջ ժամանակահատվածի համար այդ գումարին հավելագրված տոկոսից, որոնք նշված են բավարարում ստացած դիմումի մեջ:

Տոկոսադրույքը հավասար է այն վերաֆինանսավորման դրույքի մեկուկես չափին, որը գործում է լրավճարներ տրամադրելու պահին եւ սահմանվում է այն Կողմի պետության Կենտրոնական (Ազգային) բանկի կողմից, որի լրավճար տրամադրող մարմինը տրամադրել է լրավճարը: Ընդ որում, տոկոսադրույքը հաշվարկվում է⁹ լրավճարը տրամադրելու օրվանից մինչեւ փոխհատուցման միջոցի կատարման օրն ընկած ամբողջ ժամանակահատվածի համար բարդ տոկոս կիրառելու եղանակով:

8. Փոխհատուցման միջոցը համարվում է կատարված այն բանից հետո, երբ լրավճարի գումարը, հաշվի առնելով համապատասխան տոկոսը, գանձվել է լրավճար ստացողից եւ փոխանցվել այն Կողմի պետության բյուջե, որի լրավճարներ տրամադրող մարմինը տրամադրել է լրավճարը:

⁸ Արդյունաբերական լրավճարի գումարը հաշվարկվում է սույն Համաձայնագրի Հավելված 2-ի դրույթների համաձայն:

⁹ Բարդ տոկոս նշանակում է տոկոս, որը յուրաքանչյուր տարի հավելագրվում է գումարին եւ նախորդ տարվա ընթացքում դրան հավելագրված տոկոսներին:

9. Փոխհատուցման միջոցը չի համարվում կատարված, եթե այն գանձվում է սույն Հոդվածի 8-րդ կետում նշված աղբյուրներից բացի ցանկացած այլ աղբյուրից:

10. Չնայած սույն Հոդվածի 9-րդ կետի դրույթների՝ փոխհատուցման միջոցի գանձման աղբյուրները կարող են փոփոխվել հայցվոր Կողմի եւ պատասխանող Կողմի փոխհամաձայնությամբ՝ բացառապես լրավճարն ստացողի կողմից փոխհատուցման միջոցը կազմող գումարի վճարումից խուսափելը կանխելու համար:

11. Փոխհատուցման միջոցի կատարումը բավարար հիմք է՝ համարելու, որ փոխհատուցման միջոց կիրառելու մասին բավարարում ստացած դիմումին ընթացք է տրվել: Ընդ որում, փոխհատուցման միջոց կիրառելու մասին բավարարում ստացած դիմումին Կողմն ընթացք է տալիս այնպիսի ժամկետում, որը չի գերազանցում նշված դիմումը բավարարելու օրվանից հետո մեկ օրացուցային տարին:

12. Այն դեպքում, երբ փոխհատուցման միջոց կիրառելու մասին բավարարում ստացած դիմումին Կողմն ընթացք չի տալիս սահմանված ժամկետում, դիմում ներկայացրած Կողմը, սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն, իրավասու է նախաձեռնելու վեճերի կարգավորման գործընթաց պատասխան այնպիսի միջոցներ կիրառելու նպատակով, որոնք պետք է մոտավորապես համաչափ լինեն փոխհատուցման միջոցին:

Սույն Համաձայնագրի նպատակներով պատասխան միջոցներ ասելով հասկացվում է, որ պատասխան միջոց սահմանած Կողմը ժամանակավորապես դադարեցնում է այն Կողմի նկատմամբ՝ նրանց միջեւ գործող առետրատնտեսական բնույթի պայմանագրերից, բացառությամբ նավթային եւ գազային ոլորտներին առնչվող պայմանագրերի, բխող իր պարտավորությունների կատարումը, որի դեմ սահմանվել է պատասխան միջոցը:

Պատասխան միջոցների ծավալը, համաչափությունը եւ կիրառման ժամկետը որոշվում են վեճերի կարգավորման գործընթացի արդյունքներով՝ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն: Ընդ որում, վեճերի կարգավորման այդպիսի գործընթացի բոլոր ժամկետները կազմելու են սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածում սահմանված ժամկետների կեսը:

13. Կողմերի իրավասու մարմիններն իրականացնում են քննություն՝ մյուս Կողմերի պետությունների տարածքում տրամադրվող լրավճարների՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխանության վերաբերյալ, եւ քննություն՝ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետում նշված միջոցների՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխանության վերաբերյալ՝ սույն Համաձայնագրի Հավելված 2-ով սահմանված կարգով:

Հոդված 8

Ծանուցումը

1. Կողմերը յուրաքանչյուր տարի՝ ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ից ոչ ուշ, հերթական տարվա ընթացքում դաշնային/հանրապետական եւ շրջանային (մունիցիպալ)/տեղական մակարդակներով տրամադրման ենթակա բոլոր լրավճարների մասին սահմանված ձեւաչափով ծանուցում են միմյանց:

Կողմերը գաղտնի տեղեկությունների բաժին չեն փոխանցում բոլոր տրամադրվող լրավճարների մասին տվյալները, բացառությամբ այն լրավճարների, որոնք տրամադրվում են սույն Համաձայնագրով չկարգավորվող ոլորտներում՝ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

2. Սույն Հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ծանուցումների համար տեղեկությունների աղբյուր են Կողմերի պետությունների դաշնային/հանրապետական բյուջեների, ինչպես նաեւ՝ վարչատարածքային միավորների բյուջեների նախագծերի ծախսային մասերը, որոնք տրամադրվում են բաժինների, ենթաբաժինների եւ ծախսերի գործառական եւ գերատեսչական դասակարգման տեսակների կտրվածքով ու ներառում են նախագծերը Կողմերի պետությունների օրենսդիր (ներկայացուցչական) մարմիններ եւ (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչական մարմիններ ներկայացնելու ժամանակ լրավճարներ տրամադրելու կարգի եւ ծավալների մասին նորմեր:

Կողմերից մեկի պետությունում դաշնային/հանրապետական բյուջեի մասին օրենքի նախագծի կամ Կողմերի պետությունների վարչատարածքային միավորների բյուջեների մասին օրենքի նախագծի փոփոխության դեպքում՝ լրավճարներ տրամադրելու որեւէ ծրագիր դրանց մեջ ներառելու կամ դրանցից հանելու նպատակով, համապատասխան Կողմը դրա մասին գրավոր ծանուցում է մյուս Կողմերին՝ նախագծում փոփոխություններ մտցնելուց հետո ոչ ուշ, քան 30 օրացուցային օր անց:

Կողմերից մեկի պետությունում ընթացիկ տարվա համար դաշնային/հանրապետական բյուջեի մասին օրենքում կամ Կողմերի պետությունների վարչատարածքային միավորների բյուջեների մասին օրենքում լրավճարներ տրամադրելու վերաբերյալ փոփոխություններ մտցնելու դեպքում այդ Կողմը դրա մասին գրավոր ծանուցում է մյուս Կողմերին՝ ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում՝ նախքան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելը:

3. Կողմերի պետությունների լիազոր մարմինները սահմանված ձեւաչափով միմյանց ծանուցումներ են ուղարկում դաշնային/հանրապետական կամ շրջանային (մունիցիպալ)/տեղական մակարդակներով տրամադրված լրավճարների մասին՝ այն նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացուցային օրվանից ոչ ուշ, որի հիման վրա տրամադրվում է լրավճարը:

4. Կողմերի պետությունների լիազոր մարմինները սահմանված ձեւաչափով միմյանց ծանուցումներ են ուղարկում Կողմի պետության տարածքում հաշվետու տարվա ընթացքում դաշնային/հանրապետական եւ շրջանային (մունիցիպալ)/տեղական մակարդակներով տրամադրված լրավճարների մասին մինչեւ հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը: Ծանուցման մեջ պետք է ներառվեն բավարար տեղեկություններ, որպեսզի մյուս Կողմի պետության լիազոր մարմինը կարողանա գնահատել տրամադրվող լրավճարների գումարը եւ դրանց համապատասխանությունը սույն Համաձայնագրի դրույթներին:

5. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում Կողմերը սահմանված ձեւաչափով ծանուցումներ են ուղարկում բոլոր այն լրավճարների մասին, որոնք գործում են դաշնային/հանրապետական եւ շրջանային/տեղական մակարդակներով:

6. Սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ Կողմերի ծանուցումները կատարվում են սույն Համաձայնագրի Հավելված 5-ում սահմանված ձեւաչափով:

Հոդված 9

Ընդհանուր բացառությունները

Սույն Համաձայնագրի դրույթներով Կողմերի համար խոչընդոտներ չեն ստեղծվում առեւտուրը խաթարող առանձնահատուկ լրավճարներ կիրառելու հարցում, եթե այդ լրավճարները սահմանվում են բացառիկ դեպքերում, եւ եթե դրանք սահմանելը պայմանավորված է ստորեւ նշվածները պաշտպանելու անհրաժեշտությամբ.

հասարակական բարոյականությունը, հասարակական կարգուկանոնը եւ պետական անվտանգությունը,

մարդկանց, կենդանիների եւ բույսերի կյանքը կամ առողջությունը,

գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ունեցող ազգային հարստությունները,

մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները,

սպառվող բնական պաշարները, եթե նման միջոցները ձեռնարկվում են ներքին արտադրության կամ սպառման սահմանափակումների հետ միաժամանակ՝ պայմանով, որ այդ միջոցները նախատեսված չեն մյուս Կողմերի պետությունների տարածքից ապրանքների ներմուծումը սահմանափակելու համար, եւ այդ միջոցները խտրական բնույթ չեն կրում:

Հոդված 10

Վեճերի կարգավորման գործընթացը

1. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կատարման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների եւ խորհրդակցությունների անցկացման միջոցով: Եթե բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով վեճը չի կարգավորվում դրանց անցկացման մասին վեճը նախաձեռնող Կողմից պատասխանող Կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանք ներկայացնելու օրվանից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում, ապա հայցվոր Կողմն իրավունք ունի դիմելու Եվրասիական տնտեսական համայնքի դատարան կամ նախաձեռնելու Հաշտեցման հանձնաժողովի կողմից վեճի քննությունը:

2. Այն դեպքում, երբ հայցվոր Կողմը որոշում է ընդունում վեճը Հաշտեցման հանձնաժողովի միջոցով կարգավորելու մասին, նա պատասխանող Կողմին է ուղարկում միջնորդություն:

3. Հաշտեցման հանձնաժողովը ժամանակավոր է եւ ստեղծվում է որոշակի վեճ կարգավորելու համար. վեճի կարգավորումից հետո Հաշտեցման հանձնաժողովը կազմալուծվում է:

4. Եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերել, ապա Հաշտեցման հանձնաժողովի լիազորությունները ենթադրում են, հաշվի առնելով սույն Համաձայնագրի համապատասխան դրույթները, վեճի կարգավորման հարցի քննություն այնպես, ինչպես նշված է ցանկացած Կողմի միջնորդության մեջ, եւ եզրակացության ներկայացում սույն Համաձայնագրի հետ առաջարկվող միջոցների համապատասխանության մասին:

5. Ցանկացած Կողմ իրավասու է սույն Համաձայնագրի կիրառման եւ (կամ) մեկնաբանման հետ կապված վեճերը փոխանցելու Հաշտեցման հանձնաժողովի քննությանը: Հայցվոր Կողմը միջնորդության մեջ նշում է այն միջոցները կամ գործելակերպը, որոնք, իր

կարծիքով, համարվում են սույն Համաձայնագրի խախտումներ, առանձնացնում է այն դրույթները, որոնք, իր կարծիքով, առնչություն ունեն տվյալ վեճին, եւ այդ միջնորդությունն ու միջնորդ նշանակելու մասին ծանուցումը ներկայացնում է պատասխանող Կողմին: Հայցվոր Կողմը նաեւ առաջադրում է մինչեւ երեք թեկնածու՝ Հաշտեցման հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնելու համար:

Պատասխանող Կողմը 15 օրացուցային օրվա ընթացքում նշանակում է երկրորդ միջնորդին եւ առաջադրում է մինչեւ երեք թեկնածու՝ Հաշտեցման հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնելու համար:

Երկու Կողմերն էլ ձգտում են համաձայնություն ձեռք բերել նախագահի թեկնածության վերաբերյալ երկրորդ միջնորդին նշանակելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում:

6. Եթե Կողմերն ի վիճակի չեն նախագահի թեկնածության վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու 20 օրացուցային օրվա ընթացքում, ապա նրան մեկ շաբաթվա ընթացքում վիճակահանությամբ ընտրում են Կողմերի ներկայացուցիչները՝ այն անձանց ընդհանուր թվից, որոնք ընդգրկված են Կողմերից յուրաքանչյուրի՝ սույն Հոդվածի 9-րդ կետում նշված օրինակելի ցուցակում եւ որոնք վեճի մասնակից Կողմերի պետությունների քաղաքացիներ չեն:

7. Հաշտեցման հանձնաժողովը կազմված է վեճի մասնակից Կողմերից յուրաքանչյուրի միջնորդներից եւ նախագահից: Հաշտեցման հանձնաժողով ստեղծելու ամսաթիվը համարվում է նախագահ նշանակելու ամսաթիվը:

8. Անձինք, որոնք պատրաստ են եւ ունակ՝ հանդես գալու որպես Հաշտեցման հանձնաժողովի անդամներ, պետք է ունենան հատուկ գիտելիքներ կամ փորձ՝ իրավունքի, միջազգային առեստրի կամ այլ բնագավառներում, որոնք առնչվում են միջազգային առեստրի բնագավառում միջազգային պայմանագրերի հետ կապված վեճերի կարգավորմանը: Նրանք պետք է հանդես գան որպես անհատներ, այլ ոչ թե որպես պետությունների կամ որեւէ կազմակերպության ներկայացուցիչներ, գործեն լիովին անկախ, նրանք չեն կարող կապված լինել Կողմերից որեւէ մեկի հետ կամ նրանցից որեւէ հրահանգ ստանալ: Հաշտեցման հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդը չպետք է լինի սույն Համաձայնագրի Կողմերի պետությունների քաղաքացի:

9. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվանից ոչ ուշ Կողմերից յուրաքանչյուրը կազմում է 15 հոգուց ոչ ավելի անձանցից բաղկացած օրինակելի ցուցակ, որոնք պատրաստ են եւ ունակ՝ հանդես գալու որպես միջնորդներ, ընդ որում՝ նրանցից հինգը չպետք է լինի սույն Համաձայնագրի Կողմերի պետությունների քաղաքացի:

10. Հաշտեցման հանձնաժողովի ընդունած որոշումները կատարման համար պարտադիր են Կողմերից յուրաքանչյուրի համար:

11. Կողմերն ապահովում են վեճերի քննության արդյունքների հրապարակայնությունը:

12. Վեճերը քննվում են եւ բոլոր որոշումները կայացվում են գործընթացին մասնակից Կողմերի հավասարության սկզբունքի հիման վրա:

13. Կողմի հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ Հաշտեցման հանձնաժողովը կարող է պահանջել տեղեկություններ կամ տեխնիկական խորհրդատվություն ցանկացած անձից կամ մարմնից, որից անհրաժեշտ է համարում՝ Կողմերի համաձայնության առկայության դեպքում եւ այն պայմաններով, որոնց շուրջ Կողմերը կարող են համաձայնություն ձեռք բերել:

14. Հաշտեցման հանձնաժողովը չի հանդիպում Կողմերից մեկի հետ եւ նրա հետ չի հաղորդակցվում՝ մյուս Կողմի բացակայության դեպքում: Միջնորդներից ոչ մեկը չի կարող քննարկել վեճի առարկան մի Կողմի կամ երկու Կողմերի հետ՝ մյուս միջնորդների բացակայությամբ:

15. Հաշտեցման հանձնաժողովը մեկնաբանում է սույն Համաձայնագրի դրույթները՝ միջազգային հանրային իրավունքի նորմերին համապատասխան:

16. Այն Կողմը, որը պնդում է, որ մյուս Կողմի ձեռնարկած միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին, կրում է այդ անհամապատասխանությունն ապացուցելու բեռը:

17. Այն Կողմը, որը պնդում է, որ սույն Համաձայնագրին համապատասխան՝ միջոցը դասվում է բացառությունների շարքին, կրում է այդ բացառության կիրառումն ապացուցելու բեռը:

18. Վեճի քննության արդյունքներով հաշտեցման հանձնաժողովը որոշում է ընդունում:

19. Եթե Հաշտեցման հանձնաժողովը հանգում է այն եզրահանգման, որ Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոք, չի կատարել սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները, ապա այն առաջարկություններ է կատարում՝ պատասխանող Կողմի կողմից այդ խախտումների վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ, եւ ողջամիտ ժամկետ է տրամադրում՝ իր առաջարկությունների իրականացման համար:

20. Պատասխանող Կողմը պետք է հնարավորինս վաղ դադարեցնի սույն Համաձայնագրից բխող իր պարտավորությունների խախտումները՝ Հաշտեցման հանձնաժողովի որոշումները բարեխղճորեն կատարելու միջոցով:

21. Այն դեպքում, երբ Հաշտեցման հանձնաժողովի որոշումները չեն կատարվում սահմանված ժամանակահատվածում կամ եթե Հաշտեցման հանձնաժողովը որոշում է, որ այն միջոցները, որոնց մասին տեղեկացրել է պատասխանող Կողմը, չեն համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին, ապա Հաշտեցման հանձնաժողովը հայցվոր Կողմին իրավունք է տալիս ձեռնարկելու համաչափ պատասխան միջոցներ: Պատասխան միջոցների ծավալը, համաչափությունը եւ կիրառման ժամկետը որոշում է Հաշտեցման հանձնաժողովը:

22. Պատասխան միջոցները կրում են ժամանակավոր բնույթ եւ կիրառվում են հայցվոր Կողմի կողմից միայն այնքան ժամանակ, քանի դեռ սույն Համաձայնագրի նորմերը խախտող միջոցը չեղյալ չի հայտարարվել կամ փոփոխվել այնպես, որ համապատասխանի սույն Համաձայնագրի նորմերին, կամ քանի դեռ Կողմերը վեճը կարգավորելու վերաբերյալ համաձայնության չեն եկել:

23. Հաշտեցման գործընթացի ծախսերը Կողմերը կրում են հավասար չափով: Այլ տեսակի ծախսերը կրում է այն Կողմը, որն առաջացրել է դրանք:

24. Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից ի վեր սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կատարման հետ կապված վեճերը կարգավորվում են Մաքսային միության հանձնաժողովի շրջանակներում: Վեճի Կողմի կողմից Մաքսային միության հանձնաժողով գրավոր դիմում ներկայացնելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը կարգավորվում է սույն Հոդվածի 1-23 կետերի դրույթների համաձայն: Ընդ որում, Կողմերը առանց սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված բանակցությունները եւ խորհրդակցությունները անցկացնելու իրավասու են վեճը ներկայացնելու ԵվրԱզԷՄ-ի դատարանի կամ Հաշտեցման հանձնաժողովի քննությանը:

Հոդված 11

Հայցի վաղեմության ժամկետը

Սույն Համաձայնագրով սահմանված կարգի խախտմամբ տրամադրված առանձնահատուկ լրավճարների առնչությամբ հայցի վաղեմության ժամկետը կազմում է 5 տարի՝ առանձնահատուկ լրավճարը տրամադրելու պահից:

Հոդված 12

Մաքսային միության հանձնաժողովի լիազորությունները

Մաքսային միության հանձնաժողովին վերապահվում են հետևյալ գործառույթները.

1) դիտանցման իրականացում եւ Կողմերից յուրաքանչյուրի համապատասխան ազգային օրենսդրության համեմատական իրավական վերլուծության կատարում՝ սույն Համաձայնագրին համապատասխանության առումով, ինչպես նաեւ՝ Կողմերի կողմից սույն Համաձայնագրի դրույթների պահպանման մասին տարեկան զեկույցների պատրաստում,

2) աջակցություն՝ ազգային օրենսդրության ներդաշնակեցում եւ միասնականացում իրականացնելու հարցերով Կողմերի խորհրդակցությունների կազմակերպման գործում,

3) Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո ընդունել սույն Համաձայնագրի դրույթներով նախատեսված՝ Կողմերի կողմից կատարման համար պարտադիր որոշումներ՝ առանձնահատուկ լրավճարների տրամադրման իրականացվելիք եւ գործող ծրագրերի առնչությամբ, այդ թվում՝

ընդունել որոշում՝ առանձնահատուկ լրավճարների թույլատրելի կամ ոչ թույլատրելի լինելու մասին՝ Արձանագրության մեջ հաստատված չափորոշիչների հիման վրա,

առանձնահատուկ լրավճարներ տրամադրելու փաստերով իրականացնել քննություն եւ Արձանագրությամբ նախատեսված դեպքերում ընդունել դրանց վերաբերյալ պարտադիր որոշումներ,

պահանջել եւ ստանալ տրամադրվող լրավճարների մասին տեղեկություններ՝ Արձանագրության համաձայն սահմանված կարգով ու պայմաններով,

կարգավորել սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կատարման հետ կապված վեճերը 10-րդ Հոդվածի 24-րդ կետի համաձայն:

Հոդված 13

Հանձնաժողովի որոշումները վիճարկելը

Մաքսային միության հանձնաժողովի որոշումները, որոնք ընդունվել են սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան լիազորությունների շրջանակներում, կարող

են վիճարկվել ԵվրԱզԷՍ-ի դատարանում՝ Մաքսային միության իրավապայմանագրային բազայի համաձայն:

Հոդված 14

Փոփոխությունների կատարումը

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով: Սույն Համաձայնագրի վերաբերյալ վերապահում կատարել չի թույլատրվում:

Հոդված 15

Անցումային դրույթներ

1. 2017 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ Կողմերը մշակում են.

Մաքսային միության հանձնաժողովի հետ առանձնահատուկ լրավճարների պարտադիր համաձայնեցման եւ Մաքսային միության հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կարգը,

Քննությունների իրականացման կարգը, այդ թվում՝ սույն Համաձայնագրով սահմանված լրավճարների տրամադրման եւ կիրառման պայմանների եւ կարգի խախտման փաստերով,

Այն չափորոշիչները, որոնց հիման վրա Մաքսային միության հանձնաժողովը որոշում է ընդունելու՝ առանձնահատուկ լրավճարի թույլատրելի կամ ոչ թույլատրելի լինելու մասին:

2. Կողմերի՝ սույն Հոդվածի 1-ին կետում նշված պարտավորությունները ձեւակերպվում են սույն Համաձայնագրի Արձանագրությամբ, որը համարվելու է սույն Համաձայնագրի անքակտելի մաս: Կողմերն ապահովելու են, որ նշված Արձանագրությունն ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

3. Արձանագրությունն ուժի մեջ մտնելու պահից Կողմերը կարող են տրամադրել առանձնահատուկ լրավճարներ՝ միայն Մաքսային միության հանձնաժողովի հետ համաձայնության արդյունքներով, որը որոշում է կայացրել լրավճարի թույլատրելի լինելու մասին՝ Արձանագրության դրույթների համաձայն: Կողմերն իրավասու են տրամադրելու սույն Համաձայնագրի 3-րդ Հոդվածում նշված թույլատրելի լրավճարներն առանց Մաքսային

միության հանձնաժողովի հետ համաձայնեցման: Մաքսային միության հանձնաժողովը, առաջնորդվելով սույն Համաձայնագրի 4-րդ Հոդվածի դրույթներով, չի տալիս արգելված լրավճարները թույլատրելի համարելու համաձայնություն:

4. Սույն Հոդվածի 2-րդ կետում նշված Արձանագրությունն ուժի մեջ մտնելու պահից սույն Համաձայնագրի 4-րդ Հոդվածի 2-րդ եւ 4-րդ կետերի եւ սույն Համաձայնագրի 7-րդ Հոդվածի 2-րդ կետի դրույթները կորցնում են իրենց իրավական ուժը:

Հոդված 16

Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագրի հավելվածները Համաձայնագրի անքակտելի մաս են համարվում:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ ավանդապահն ստանում է Կողմերի կողմից այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը:

Սույն Համաձայնագիրը բաց է ԵվրԱզԷՍ-ի մյուս անդամ պետությունների կողմից՝ դրան միանալու համար: Սույն Համաձայնագիրն միանալու վերաբերյալ փաստաթղթերը հանձնվում են ավանդապահի պահպանությանը:

Միացած պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու վերաբերյալ փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեում, որը համարվում է սույն Համաձայնագրի ավանդապահը եւ յուրաքանչյուր Կողմի կտրամադրի հաստատված պատճենը:

(ստորագրություններ)

«Արդյունաբերական լրավճարների
տրամադրման միասնական կանոնների
մասին» համաձայնագրի

ԱՐԳԵԼՎԱԾ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ¹⁰ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿԸ

1. Ծրագրեր, որոնցով արտահանողն¹¹ ազատվում է պետությանը արժույթային հասույթի մի մասը պարտադիր կերպով վաճառելուց կամ որոնցով թույլատրվում է կիրառել արժույթի մի քանի փոխարժեք՝ ազգային արժույթի մասնակի արժեզրկման միջոցով, ինչի արդյունքում փոխարժեքի տարբերության հաշվին արտահանողն ստանում է առավելություն:

2. Արտահանվող բեռների համար ներքին տրանսպորտային եւ բեռնափոխադրման սակագները՝ պետության կողմից սահմանված կամ գանձված այնպիսի պայմաններով, որոնք ներքին շուկայում իրականացվող փոխադրումների հետ համեմատությամբ ավելի արտոնյալ են¹²:

3. Արտահանվող ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների եւ ծառայությունների տրամադրումն ավելի արտոնյալ պայմաններով, քան ներքին շուկայում իրացվող նույնանման ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների եւ ծառայությունների համար:

4. Վճարումից ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատումը, վճարումը հետաձգելու հնարավորության ընձեռումը կամ տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարվող կամ վճարման ենթակա հարկերի կամ ցանկացած այլ գանձումների նվազեցումը, որոնք կապված

¹⁰ Արգելված լրավճարների ներկայացված ցանկը պարտադիր չէ, որ լինի ավարտուն:

¹¹ Սույն Ցանկի շրջանակներում ապրանքների արտահանում ասելով հասկացվում է լրավճար տրամադրող Կողմի պետության տարածքից ապրանքների դուրսհանումը մեկ այլ Կողմի պետության տարածք:

¹² Այդպիսի արդյունաբերական լրավճարներն արգելված չեն՝ սույն Հավելվածի սահմանումների եւ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն, եթե դրանց տրամադրումը հնարավոր է՝ «Երկաթուղային տրանսպորտի ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների հասանելիությունը՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքները կարգավորելու մասին» համաձայնագրով:

են արտահանման արդյունքների կամ այն ապրանքների օգտագործման հետ, որոնք ծագում են նշված արտոնությունները տրամադրող Կողմի պետության տարածքից: Ընդ որում, վճարման հետաձգումն անպայմանորեն չի համարվում արգելված լրավճար, եթե գանձվում են վճարման ենթակա տուժանքներ՝ հարկերը չվճարելու դիմաց: Արտահանվող ապրանքի համար ԱԱՀ-ի գանձումը՝ զրոյական դրույքաչափով, չի վկայում արգելված լրավճարի մասին:

5. Ապրանքների հարկման բազան կրճատող՝ արտահանման արդյունքների հետ կապված հատուկ պահումներն ավելի մեծ ծավալով՝ ներքին շուկայում իրացվող նույնանման ապրանքների հետ համեմատությամբ:

6. Հարկերի վճարումից ազատումը, դրանց նվազեցումը, վճարման հետաձգումը կամ հատուկ պահումները, որոնք կիրառվում են արտահանվող ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների եւ ծառայությունների հարկման բազայի հաշվարկի համար՝ ավելի մեծ ծավալով, քան ներքին շուկայում իրացվող նույնանման ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների եւ ծառայությունների հարկման բազայի հաշվարկի համար կիրառվող հարկերի վճարումից ազատումը, դրանց նվազեցումը, վճարման հետաձգումը կամ հատուկ պահումները

7. Արտահանվող արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող հումքի եւ նյութերի դիմաց մաքսային վճարների գանձումը՝ ավելի ցածր դրույքաչափերով, քան ներքին շուկայում սպառման համար նախատեսված նույնանման արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող նույնպիսի հումքի եւ նյութերի դիմաց, կամ արտահանվող արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող հումքի եւ նյութերի դիմաց մաքսային վճարները վերադարձնելը՝ ավելի մեծ ծավալով, քան ներքին շուկայում իրացվող նույնանման արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող նույնպիսի հումքի եւ նյութերի դեպքում:

8. Այն ներմուծման տուրքերի նվազեցումը կամ վերադարձնելը, որոնք գանձվում են արտադրանքի արտադրության մեջ օգտագործված ներմուծվող հումքի եւ նյութերի դիմաց, եթե արտադրված արտադրանքում հայրենական արտադրության նյութերի կամ հումքի պարունակությունը պարտադիր է, անկախ նրանից, թե սահմանվում են որոշակի ապրանքներ, դրանց ծավալը կամ արժեքը, կամ դրանց տեղական արտադրության ծավալից կամ արժեքից ունեցած մասնաբաժինը:

9. Այնպիսի պարգեավճարների գանձումը, որոնք բավարար չեն արտահանման վարկերի երաշխավորման կամ ապահովագրման, արտահանվող ապրանքների արժեքի կամ

արժույթային դիսկերի մեծացումից ապահովագրման կամ երաշխավորման ծրագրերով երկարաժամկետ գործառնական ծախսերը կամ վնասները ծածկելու համար:

10. Արտահանման վարկերի տրամադրումն այնպիսի դրույքաչափերով, որոնք ավելի ցածր են այն դրույքաչափերից, որոնք այդ վարկերն ստացողները փաստացիորեն պետք է վճարեին շուկայական պայմաններում համադրելի վարկից օգտվելու դիմաց (վարկի մարման միեւնոյն ժամկետը, վարկի արժույթը եւ այլն), կամ բոլոր այն ծախսերի կամ դրանց մի մասի վճարումը, որոնք կրել են արտահանողները կամ ֆինանսական հաստատությունները վարկն ստանալու կապակցությամբ: Արտահանման վարկավորման գործելակերպը, որը համապատասխանում է ՏՀԶԿ-ի անդամ պետությունների կողմից մշակված արտահանման պաշտոնական վարկերի մասին Համաձայնագրի՝ տոկոսադրույքներին վերաբերող դրույթներին, չի դիտարկվելու որպես լրավճար:

11. Որեւէ ձեռնարկության համար նախատեսված էլեկտրաէներգիայի կամ էներգակիրների համար սակագների նվազեցումը, պայմանով, որ այդպիսի լրավճարների տրամադրումը հստակ կերպով կապված է արտահանման արդյունքների կամ ներմուծված ապրանքների փոխարեն հայրենական արտադրության ապրանքների օգտագործման հետ:

Հավելված 2

«Արդյունաբերական լրավճարների տրամադրման միասնական կանոնների մասին» համաձայնագրի

ԼՐԱՎՃԱՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ԿՈՂՄԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Լրացուցիչ սահմանումներ.

1) «լրավճարված ապրանք»՝ ապրանք, որի արտադրության, փոխադրման, պահպանման կամ լրավճար տրամադրող Կողմի պետության տարածքից արտահանման ժամանակ կիրառվել է հատուկ լրավճար,

2) «լրավճարված ապրանք արտադրողներ»՝ առանձնահատուկ լրավճար տրամադրած Կողմի պետության՝ լրավճարված ապրանք արտադրողները,

3) «նույնանման ապրանքի ազգային արտադրողներ»՝ քննությունն իրականացնող Կողմի պետությունում նույնանման ապրանք արտադրողները:

Հոդված 1

Քննություն իրականացնելու հիմքերը

1. Լրավճարների տրամադրման համար միասնական կանոնների մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) դրույթներին այլ Կողմի պետության տարածքում տրամադրվող լրավճարների համապատասխանությունը վերլուծելու նպատակով իրականացվող քննությունն անց է կացվում, ինչպես նաև առանձնահատուկ լրավճար տրամադրած Կողմի պետության տարածքից լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայությունը որոշվում է Կողմի պետության իրավասու մարմնի (այսուհետ՝ իրավասու մարմին) կողմից՝ տվյալ Կողմի տարածքում գրանցված նույնանման ապրանքի

ազգային արտադրողների կողմից սույն Հոդվածի դրույթների համաձայն ներկայացված գրավոր դիմումի հիման վրա, կամ իրավասու մարմնի սեփական նախաձեռնությամբ:

2. Սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը ներկայացվում է համանման ապրանքի ազգային արտադրողի կամ ազգային արտադրողների միավորման կողմից, որի մասնակիցների թվին են պատկանում ազգային տնտեսության ճյուղ կազմող արտադրողները:

Սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը կարող է նաեւ ներկայացվել այդ անձանց ներկայացուցիչների կողմից, որոնք ունեն այն Կողմի պետության ազգային օրենսդրության համաձայն պատշաճ կերպով ձեւակերպված լիազորություններ, որտեղ գրանցված է դիմումատուն:

3. Սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը պետք է ներառի՝
դիմումատուի մասին տվյալներ,

ապրանքի նկարագրություն՝ ծագման երկրի եւ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրի նշումով,

առանձնահատուկ լրավճարի առկայության, բնույթի եւ չափի մասին տվյալներ,
լրավճարված ապրանքն արտադրողների մասին տվյալներ,

նույնանման ապրանքի հայտնի ազգային արտադրողների մասին տվյալներ,

տվյալներ՝ այն Կողմի պետության տարածք լրավճարված ապրանքի ներմուծման ծավալի փոփոխության մասին, որի իրավասու մարմին համապատասխան դիմումը ներկայացվել է՝ դիմումը ներկայացնելուն նախորդող երեք օրացուցային տարվա կտրվածքով,

տվյալներ՝ այն Կողմի պետության տարածքից մյուս Կողմերի պետությունների տարածք նույնանման ապրանքի արտահանման ծավալի փոփոխության մասին, որի իրավասու մարմին ներկայացվել է համապատասխան դիմումը,

լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության ապացույցները: Լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի առկայության կամ նյութական վնաս հասցնելու վտանգի մասին ապացույցները հիմնվում են այն օբյեկտիվ գործոնների վրա, որոնցով բնութագրվում է ազգային տնտեսության ճյուղի տնտեսական իրավիճակը եւ որոնք կարող են արտահայտվել քանակական ցուցանիշներով (այդ թվում՝ ապրանքի արտադրության եւ դրա վաճառքի ծավալները, Կողմի պետության շուկայում ապրանքի մասնաբաժինը, ապրանքի արտադրության ինքնարժեքը, ապրանքի գինը,

արտադրական հզորությունների ծանրաբեռնվածության, աշխատանքի արտադրողականության, շահույթի չափերի, ապրանքի արտադրության եւ վաճառքի եկամտաբերության, ազգային տնտեսության ճյուղում ներդրումների ծավալի մասին տվյալները),

տվյալներ՝ Մաքսային միության անդամ պետությունների միասնական մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման ծավալների փոփոխության մասին (քանակական եւ արժեքային արտահայտությամբ)՝ դիմումը ներկայացնելուն նախորդող երեք օրացուցային տարվա կտրվածքով,

տվյալներ՝ Մաքսային միության անդամ պետությունների միասնական մաքսային տարածքից նույնանման ապրանքի արտահանման ծավալների փոփոխության մասին (քանակական եւ արժեքային արտահայտությամբ)՝ դիմումը ներկայացնելուն նախորդող երեք օրացուցային տարվա կտրվածքով,

այլ գործոնների վերլուծություն, որոնք վերլուծվող ժամանակահատվածում կարող էին ունենալ ազդեցություն ազգային տնտեսության ճյուղի վրա:

4. Սույն Հոդվածի 1-ին մասում ներկայացված դիմումի մեջ պարունակվող արժեքային ցուցանիշները նշելիս համադրելիության նպատակով պետք է կիրառվի այնպիսի դրամական միավոր, որը սահմանված է արտաքին առևտրի վիճակագրությունը կազմելու համար:

5. Սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը՝ դրա ոչ գաղտնի տարբերակի հետ (եթե դիմումի մեջ պարունակվում են գաղտնի տեղեկություններ) ներկայացվում է իրավասու մարմին եւ ենթակա է գրանցման՝ դիմումը նշված մարմնի կողմից ստանալու օրը:

6. Սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը մերժվում է հետեւյալ հիմքերով.

սույն Հոդվածի 2-րդ մասում սահմանված պահանջներին դիմումատուի չհամապատասխանելը, դիմումը ներկայացնելիս սույն Հոդվածի 3-րդ մասում նշված նյութերը չներկայացնելը,

դիմումատուի կողմից ներկայացված այն նյութերի արժանահավատ չլինելը, որոնք նախատեսված են սույն Հոդվածի 3-րդ մասով:

Դիմումն այլ հիմքերով մերժել չի թույլատրվում:

7. Նախքան քննությունը սկսելու մասին որոշում կայացնելը իրավասու մարմինը դիմում ստանալու մասին գրավոր ծանուցում է այն Կողմի պետության իրավասու մարմնին, որի տարածքում տրամադրվում է դիտարկվող առանձնահատուկ լրավճարը:

8. Քննություն սկսելու մասին որոշում կայացնելու նպատակով իրավասու մարմինը՝ սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը գրանցելու օրվանից հետո երեսուն օրացուցային օրվա ընթացքում ուսումնասիրում է այդ դիմումի մեջ պարունակվող ապացույցների եւ տվյալների բավարար եւ ճշգրիտ լինելը՝ սույն Հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել, եթե անհրաժեշտություն կա, որ իրավասու մարմինը դիմումատուից լրացուցիչ տվյալներ ստանա, սակայն բոլոր դեպքերում այդ ժամկետը չպետք է գերազանցի քառասուն օրացուցային օրը:

9. Դիմումատուն կարող է հետ վերցնել սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը՝ նախքան քննությունն սկսելը կամ քննություն անցկացնելու ընթացքում:

Այն դեպքում, երբ սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը հետ է վերցվում նախքան քննությունն սկսելը, այդ դիմումը համարվում է չներկայացված:

Այն դեպքում, երբ սույն Հոդվածի 1-ին մասում նշված դիմումը հետ է վերցվում քննությունն անցկացնելու ընթացքում, դրան ընթացք չի տրվում կամ ընթացք է տրվում՝ իրավասու մարմնի որոշմամբ:

Հոդված 2

Խորհրդակցություններ՝ ենթադրվող առանձնահատուկ լրավճարի գոյությունը որոշելու համար

1. Սույն Կարգի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված դիմումը ուսումնասիրման նպատակով ընդունելուց հետո եւ նախքան քննություն սկսելու մասին որոշում կայացնելը իրավասու մարմինը առանձնահատուկ լրավճարը տրամադրած Կողմի պետության իրավասու մարմնին առաջարկում է անցկացնել խորհրդակցություններ՝ առանձնահատուկ լրավճարի գոյության, չափի եւ կիրառման, ինչպես նաեւ՝ այն տրամադրելու հետեւանքներին առնչվող իրադրությունը ճշտելու եւ փոխընդունելի որոշում կայացնելու նպատակով: Այդ խորհրդակցությունները կարող են շարունակվել նաեւ քննության ընթացքում:

2. Առանձնահատուկ լրավճարի գոյությանը, չափին եւ այն տրամադրելու հետեւանքներին առնչվող իրադրությունը ճշտելու նպատակով խորհրդակցությունների անցկացումը չի խոչընդոտում այն բանին, որ իրավասու մարմինը որոշում կայացնի քննություն սկսելու մասին, ինչպես նաեւ՝ այդ քննության արդյունքներով մշակի եզրակացություններ՝ Համաձայնագրի դրույթներին մյուս Կողմի պետության տարածքում տրամադրված առանձնահատուկ լրավճարի համապատասխանության վերաբերյալ, եւ (կամ) առանձնահատուկ լրավճարը տրամադրած

Կողմի պետության տարածքից լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելու մասին, եւ փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմումը փոխանցի այն Կողմին, որի պետության տարածքում տրամադրվում է դիտարկվող առանձնահատուկ լրավճարը:

Հոդված 3

Քննության սկիզբն ու դրա անցկացումը

1. Նախքան սույն Կարգի 1-ին հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետի լրանալը իրավասու մարմինը որոշում է ընդունում քննություն սկսելու կամ դրա անցկացումը մերժելու մասին:

Քննության անցկացումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում իրավասու մարմինն այդ որոշումն ընդունելու օրվանից հետո տասն օրացուցային օրը չգերազանցող ժամկետում գրավոր ծանուցում է դիմումատուին քննության անցկացումը մերժելու պատճառի մասին:

Քննություն սկսելու մասին որոշում ընդունելու դեպքում իրավասու մարմինը գրավոր ծանուցում է առանձնահատուկ լրավճար տրամադրած Կողմի պետության իրավասու մարմնին, ինչպես նաեւ՝ իրեն հայտնի այլ շահագրգիռ անձանց ընդունված որոշման մասին, եւ քննություն սկսելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո հինգ աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում ապահովում է քննություն սկսելու մասին ծանուցման հրապարակումը: Քննություն սկսելու մասին ծանուցումը հրապարակելու օրն ընդունվում է որպես քննությունն սկսելու օրը:

2. Իրավասու մարմինը, այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ, քննություն սկսելու մասին որոշում կարող է կայացնել այն դեպքում, երբ այդ մարմինը տիրապետում է Համաձայնագրի դրույթները խախտելու մասին փաստերի առկայության ապացույցների եւ (կամ) տվյալ Կողմի պետության տարածք լրավճարված ապրանք ներմուծելու հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության կամ լրավճարված ապրանքի պատճառով առանձնահատուկ լրավճարը տրամադրած Կողմի պետության կամ երրորդ Կողմի պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու ապացույցների:

Այն դեպքում, երբ նման ապացույցները բավարար չեն քննություն անցկացնելու համար, այդպիսի քննություն չի կարող սկսվել:

3. Քննություն սկսելու մասին որոշում ընդունելուց հետո իրավասու մարմինը նույնանման ապրանքի իրեն հայտնի ազգային արտադրողներին եւ քննության առարկա համարվող՝

լրավճարված ապրանքի արտադրողներին է ուղարկում այն հարցերի ցանկը, որոնց նրանք պետք է պատասխանեն քննություն իրականացնելու նպատակով:

Նույնանման ապրանքի ազգային արտադրողներին եւ քննության առարկա համարվող՝ լրավճարված ապրանքի արտադրողներին, որոնց ուղարկվել է հարցերի ցանկը, տրվում է երեսուն օրացուցային օր՝ նշված ցանկն ստանալու օրվանից հետո՝ իրավասու մարմինն իրենց պատասխանները ներկայացնելու համար: Նույնանման ապրանքի ազգային արտադրողներին եւ քննության առարկա համարվող՝ լրավճարված ապրանքի արտադրողների հիմնավորված եւ գրավոր ներկայացված խնդրանքի հիման վրա իրավասու մարմինը կարող է երկարաձգել նշված ժամկետը, սակայն այն չպետք է գերազանցի տասն օրացուցային օրը:

Սույն Հոդվածի նպատակներով հարցերի ցանկն ստացված է համարվում՝ այն փոստով ուղարկելու օրվանից կամ ազգային արտադրողի կամ լրավճարված ապրանքն արտադրողի ներկայացուցչին այն անմիջականորեն փոխանցելու օրվանից յոթ օրացուցային օր հետո:

Քննության ընթացքում ներկայացված տվյալներն ստուգելու կամ իրականացվող քննությանն առնչվող լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով իրավասու մարմինը կարող է քննություն անցկացնել առանձնահատուկ լրավճարը տրամադրած Կողմի պետության տարածքում՝ դրա համար քննության առարկա համարվող՝ լրավճարված ապրանքի համապատասխան արտադրողի համաձայնությունն ստանալու պայմանով, ինչպես նաեւ՝ համապատասխան պետության կառավարության ներկայացուցիչներին նախապես ծանուցման եւ այդ պետության տարածքում քննություն անցկացնելու վերաբերյալ այդ պետության կողմից առարկության բացակայության պայմանով:

Քննության ընթացքում ներկայացված տվյալներն ստուգելու կամ իրականացվող քննությանն առնչվող լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով իրավասու մարմինն իրավունք ունի իր ներկայացուցիչներին ուղարկելու նույնանման ապրանքի ազգային արտադրողների գտնվելու վայր, անցկացնելու խորհրդակցություններ եւ բանակցություններ շահագրգիռ անձանց հետ, ուսումնասիրելու քննության առարկա համարվող՝ լրավճարված ապրանքի նմուշները եւ ձեռնարկելու քննությունն անցկացնելու համար անհրաժեշտ այլ գործողություններ, որոնք չեն հակասում քննությունն անցկացնող Կողմի պետության օրենսդրությանը:

4. Քննություն իրականացնելու ընթացքում իրավասու մարմինը կարող է դիտարկվող լրավճարը տրամադրած կամ տրամադրող Կողմի պետության լիազոր մարմիններին, ինչպես

նաեւ՝ շահագրգիռ անձանց ուղարկել հարցումներ՝ անցկացվող քննությանն առնչվող տեղեկություններ տրամադրելու մասին:

5. Շահագրգիռ անձինք քննություն սկսելու մասին ծանուցման մեջ նշված օրվանից ոչ ուշ իրավունք ունեն տրամադրելու քննություն իրականացնելու համար անհրաժեշտ տվյալներ, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ՝ նշելով այդ տվյալների աղբյուրը: Իրավասու մարմինն իրավունք ունի շահագրգիռ անձանցից պահանջելու լրացուցիչ տվյալներ:

6. Քննությանն առնչվող ապացույցներն ու տվյալները իրավասու մարմինն պետք է տրամադրվեն քննությունն անցկացնող Կողմի պետությունում պետական համարվող լեզվով, իսկ օտար լեզվով կազմված փաստաթղթերի բնօրինակներին պետք է կցված լինի դրանց թարգմանությունը (ներկայացված թարգմանության վավերացմամբ):

7. Հաշվի առնելով սույն Կարգի 8-րդ հոդվածի համաձայն գաղտնի տեղեկությունները պաշտպանելու անհրաժեշտությունը՝ իրավասու մարմինը քննության ընթացքում շահագրգիռ անձանց, նրանց գրավոր խնդրանքի հիման վրա, ընձեռում է հնարավորություն ծանոթանալու այն տվյալներին, որոնք գրավոր ներկայացվել են ցանկացած շահագրգիռ անձի կողմից՝ որպես քննության առարկային առնչվող ապացույց: Իրավասու մարմինը քննության մասնակիցներին ընձեռում է հնարավորություն՝ ծանոթանալու քննությանն առնչվող եւ քննության ընթացքում դրա կողմից օգտագործվող այլ տվյալների հետ, որոնք, սակայն, գաղտնի տեղեկություններ չեն՝ Համաձայնագրի սույն Հավելվածի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն:

8. Կողմերի պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինները, որոնք լիազորված են մաքսային գործի, պետական վիճակագրություն կազմելու բնագավառներում, Կողմերի պետությունների պետական իշխանության (կառավարման) այլ մարմինները եւ պետական իշխանության (կառավարման) տարածքային (տեղական) մարմինները պետք է աջակցություն ցուցաբերեն քննություն իրականացնելու գործում եւ իրավասու մարմնի հարցումների հիման վրա տրամադրեն քննությունն անցկացնելու համար անհրաժեշտ տվյալներ, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ պարունակող:

9. Քննություն անցկացնելու ժամկետը չպետք է գերազանցի քննությունն սկսելու օրվանից հետո վեց ամիսը:

Քննությունը համարվում է ավարտված այն օրը, երբ քննությունն անցկացրած իրավասու մարմինը քննության արդյունքներն ուղարկում է տվյալ Կողմի կառավարության դիտարկմանը:

Հոդված 4

Քննության արդյունքներով որոշում կայացնելը

1. Քննության արդյունքներով իրավասու մարմինը մշակում է եզրակացություն՝ Համաձայնագրի դրույթներին մյուս Կողմի պետության տարածքում տրամադրված լրավճարի համապատասխանության վերաբերյալ:

2. Այն դեպքում, երբ քննության արդյունքներով ապացուցվում է Համաձայնագրի դրույթները խախտելու եւ (կամ) ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելու փաստը, Կողմը, որի իրավասու մարմինն անց է կացրել քննությունը, այն Կողմին, որի տարածքում տրամադրվում է դիտարկվող առանձնահատուկ լրավճարը, փոխանցում է փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմում:

Հոդված 5

Ազգային տնտեսության ճյուղը որոշելու առանձնահատկությունները

1. Փոխհատուցման միջոց սահմանելուց առաջ քննություն անցկացնելու դեպքում «ազգային տնտեսության ճյուղ» հասկացությունն ընկալվում է Համաձայնագրի 3-րդ հոդվածում սահմանված իմաստով, բացառությամբ սույն Հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի:

2. Ազգային տնտեսության ճյուղը որոշելիս այն Կողմի պետության տարածքը, որի իրավասու մարմինն անց է կացնում քննությունը, կարող է դիտարկվել որպես մի տարածք, որտեղ գործում են երկու կամ մի քանի մրցակից շուկաներ, իսկ նշված շուկաներից որեւէ մեկի սահմաններում ազգային արտադրողները կարող են դիտարկվել որպես ազգային տնտեսության առանձին ճյուղ, եթե այդ արտադրողները նման շուկայում վաճառում են իրենց կողմից արտադրվող նույնանման ապրանքի ութսուն տոկոսից ոչ պակասը, եւ նույնանման ապրանքի պահանջարկն այդ շուկայում զգալիորեն չի բավարարվում տվյալ ապրանքի այն ազգային արտադրողների կողմից, որոնք գտնվում են քննությունն անցկացնող Կողմի պետության մնացած տարածքում: Այդպիսի դեպքերում վնասի առկայությունը կարող է հաստատվել, նույնիսկ եթե ազգային տնտեսության ճյուղի հիմնական մասին վնաս չի հասցվել, պայմանով, որ լրավճարված ապրանքի վաճառքը կենտրոնացած է նշված մրցակից շուկաներից մեկում, եւ լրավճարված ապրանքի ներմուծումը վնաս է հասցնում մեկ այդպիսի շուկայի սահմաններում նույնանման ապրանքի ազգային արտադրողների ութսուն տոկոսից ոչ պակասին:

Հոդված 6

Առանձնահատուկ լրավճարի չափի հաշվարկման կանոնները

1. Առանձնահատուկ լրավճարի չափը որոշվում է այդ լրավճարն ստացողին բաժին հասած օգուտի չափի հիման վրա: Առանձնահատուկ լրավճարի օգուտի չափը հաշվարկելիս իրավասու մարմինը հաշվի է առնում, որ՝

ա) լրավճար տրամադրող մարմնի մասնակցությունը կազմակերպության կապիտալում չի դիտարկվում որպես առանձնահատուկ լրավճարի տրամադրում, եթե այդպիսի մասնակցությունը չի կարող որակվել որպես համապատասխան Կողմի պետության տարածքում սովորական ներդրումային պրակտիկային չհամապատասխանող գործողություն (ներառյալ ռիսկային կապիտալի տրամադրումը),

2) լրավճար տրամադրող մարմնի կողմից տրամադրված վարկը չի դիտարկվում որպես առանձնահատուկ լրավճարի տրամադրում, եթե վարկ ստացող կազմակերպության կողմից պետական վարկի դիմաց վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այդ կազմակերպությունը կվճարեր համադրելի առետրային վարկի դիմաց, որը տվյալ կազմակերպությունը կարող է ստանալ համապատասխան Կողմի պետության վարկային շուկայում: Հակառակ դեպքում օգուտ է համարվում այս երկու գումարների միջև եղած տարբերությունը:

3) լրավճար տրամադրող մարմնի կողմից վարկի երաշխավորումը չի դիտարկվում որպես առանձնահատուկ լրավճարի տրամադրում, եթե լրավճար տրամադրող մարմնի երաշխավորած վարկի դիմաց երաշխիք ստացող կազմակերպության կողմից վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այդ կազմակերպությունը կվճարեր համադրելի առետրային վարկի դիմաց՝ առանց պետական երաշխիքի: Հակառակ դեպքում օգուտ է համարվում այս երկու գումարների միջև եղած տարբերությունը՝ ճշգրտված ըստ միջնորդավճարների:

4) լրավճար տրամադրող մարմնի կողմից ապրանքների կամ ծառայությունների մատակարարումը կամ ապրանքների գնումը չի դիտարկվում որպես առանձնահատուկ լրավճարի տրամադրում, եթե միայն ապրանքները կամ ծառայությունները մատակարարվում են համարժեք վճարից ավելի ցածր վճարի դիմաց կամ գնումները չեն կատարվում համարժեք վճարից ավելի բարձր վճարի դիմաց: Վճարի համարժեքությունը որոշվում է՝ ելնելով համապատասխան Կողմի պետության շուկայում այդպիսի ապրանքների եւ ծառայությունների գնման եւ վաճառքի՝ գոյություն ունեցող շուկայական պայմաններից՝ ներառյալ գինը, որակը,

մատչելիությունը, իրացվելիությունը, տեղափոխումը եւ ապրանքի գնմանը կամ վաճառքին առնչվող մյուս պայմանները:

2. Լրավճարի չափի հաշվարկն իրականացվում է այն ապրանքի միավորի (տոննա, խորանարդ մետր, հատ եւ այլն) համար, որը ներմուծվել է այն Կողմի պետության տարածք, որի իրավասու մարմինն անց է կացնում քննությունը, կամ որն իրացվել է այն Կողմի պետության շուկայում, որի տարածքում տրամադրվում է առանձնահատուկ լրավճարը, կամ երրորդ Կողմի պետության շուկայում:

3. Լրավճարի չափը հաշվարկելիս պետք է հաշվի առնել համապատասխան Կողմի պետությունում գնաճի ցուցանիշներն այն դեպքում, երբ գնաճի տեմպերն այնքան մեծ են, որ կարող են խեղաթյուրել ստացված արդյունքները:

4. Ապրանքի միավորի համար լրավճարի չափը որոշվում է՝ ելնելով այդ նպատակով առանձնահատուկ լրավճար տրամադրած համապատասխան Կողմի պետության կատարած ծախսերի չափից:

5. Ապրանքի միավորի համար լրավճարի չափը հաշվարկելիս այդպիսի ապրանքի արժեքը սահմանվում է որպես լրավճար ստացող իրավաբանական անձի վաճառքների ընդհանուր արժեքը՝ լրավճարն ստանալուն նախորդող 12 ամիսների կտրվածքով, որոնց վերաբերյալ գոյություն ունեն անհրաժեշտ տվյալներ:

6. Լրավճարի չափը հաշվարկելիս անհրաժեշտ է լրավճարի ընդհանուր գումարից հանել գրանցման համար ցանկացած գանձման գումարը կամ լրավճարն ստանալու համար կատարված մյուս ծախսերը:

7. Եթե լրավճարը չի տրամադրվում արտադրված, արտահանված կամ փոխադրված ապրանքի որոշակի քանակի կապակցությամբ, ապա ապրանքի միավորի համար լրավճարի չափի հաշվարկն իրականացվում է լրավճարի ընդհանուր գումարը լրավճարը տրամադրելու ժամանակահատվածում այդ ապրանքի արտադրության, վաճառքի կամ արտահանման ծավալի վրա բաժանելու միջոցով՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով լրավճարված ներմուծվող ապրանքի մասնաբաժինը ապրանքի արտադրության, վաճառքի կամ արտահանման ընդհանուր ծավալի մեջ:

8. Եթե լրավճարը տրամադրվում է հիմնական միջոցների բարելավման կամ ձեռքբերման կապակցությամբ, ապա լրավճարի չափի հաշվարկն իրականացվում է՝ լրավճարի գումարն այդ հիմնական միջոցների մաշվածության միջին ժամկետի կտրվածքով բաշխելու միջոցով՝ առանձնահատուկ լրավճարը տրամադրած համապատասխան Կողմի պետության

տնտեսության դիտարկվող ճյուղում: Ապրանքի միավորի համար լրավճարի չափի հաշվարկը ներառում է նաեւ այն լրավճարները, որոնք տրամադրվել են հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով՝ նախքան քննության ընթացքում դիտարկվող ժամանակահատվածի սկիզբը, որոնց մաշվածության ժամկետը, սակայն, դեռեւս չի լրացել:

9. Այն դեպքում, երբ միեւնույն ապրանքի համար տարբեր ժամանակահատվածներում կամ տարբեր նպատակներով տրամադրվող լրավճարի մեծությունը տարբեր է, լրավճարի չափը հաշվարկելիս կիրառվում են լրավճարի չափի միջին կշռված ցուցանիշներ՝ ելնելով ապրանքի արտադրության, վաճառքի կամ արտահանման ծավալից:

10. Եթե լրավճարը տրամադրվում է հարկային արտոնությունների ձեւով, ապա ապրանքի արժեքը որոշվում է վերջին 12 ամիսների կտրվածքով, որոնց ընթացքում կիրառվել են հարկային արտոնությունները, դրա վաճառքի ընդհանուր արժեքի հաշվարկի հիման վրա:

11. Օրացուցային տարվա ընթացքում լրավճար տրամադրող տարբեր մարմինների կողմից եւ (կամ) տարբեր ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված լրավճարները պետք է գումարվեն:

Հոդված 7

Շահերի լուրջ ոտնահարումը որոշելը

1. Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետի 4.1 եւ 4.2 ենթակետերի նպատակներով՝ լրավճար տրամադրող Կողմի պետության շուկայից կամ երրորդ Կողմի պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու կամ լրավճար տրամադրող Կողմի պետության տարածք նույնանման ապրանքի ներմուծման աճը զսպելու, կամ երրորդ Կողմի պետության տարածք ապրանքի արտահանման աճը զսպելու փաստը հաստատվում է այն դեպքում, երբ ապացուցվում է, որ լրավճար տրամադրող Կողմի պետության շուկայում կամ երրորդ Կողմի պետության շուկայում նույնանման ապրանքի մասնաբաժինը՝ լրավճարված ապրանքի համեմատ, անբարենպաստ փոփոխություն է կրել: Նշված փաստը հաստատվում է այնպիսի ժամանակահատվածի համար, որը բավարար է տվյալ ապրանքի շուկայում զարգացումների հստակ միտումներն ապացուցելու համար, եւ որը սովորական պայմաններում պետք է լինի մեկ տարուց ոչ պակաս:

Լրավճար տրամադրող Կողմի պետության շուկայում կամ երրորդ Կողմի պետության շուկայում մասնաբաժնի անբարենպաստ փոփոխությունը ներառում է հետեւյալ իրավիճակներից ցանկացածը.

ա) շուկայում լրավճարված ապրանքի մասնաբաժինը մեծանում է,

բ) շուկայում լրավճարված ապրանքի մասնաբաժինը մնում է անփոփոխ այնպիսի հանգամանքներում, երբ առանձնահատուկ լրավճար չսահմանելու դեպքում այն պետք է նվազեր,

գ) շուկայում լրավճարված ապրանքի մասնաբաժինը փոքրանում է, սակայն ավելի դանդաղ տեմպերով, քան դա տեղի կունենար առանձնահատուկ լրավճար չսահմանելու պարագայում:

2. Գների նվազեցումը, որի մասին նշված է Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետի 4.3 ենթակետում, պետք է հաստատվի համապատասխան շուկայում լրավճարված ապրանքի գներն այն ապրանքի գների հետ համադրելու միջոցով, որի արտադրության, փոխադրման կամ ցանկացած Կողմի պետության տարածք արտահանման ժամանակ չի կիրառվել առանձնահատուկ լրավճար: Համադրումը պետք է իրականացվի առետրի միեւնույն մակարդակի վրա եւ համեմատելի ժամանակահատվածների կտրվածքով: Համադրումն իրականացնելու ընթացքում պետք է հաշվի առնել գների համադրելիության վրա ազդող ցանկացած այլ գործոն: Այն դեպքում, երբ նշված ուղղակի համադրումը հնարավոր չէ իրականացնել, գների նվազեցման առկայությունը կարող է հաստատվել արտահանման միջին գների հիման վրա:

3. Այն դեպքերում, երբ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ երկու Կողմերի միջեւ առկա է վեճ՝ երրորդ Կողմի պետության շուկայում շահերի լուրջ ոտնահարմանն առնչվող, ինչպես դա սահմանված է սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետի եւ սույն Հավելվածի 7-րդ հոդվածի դրույթների համաձայն, այդ Կողմը վեճի Կողմերին է տրամադրում վեճի առարկային վերաբերող առկա վիճակագրական տեղեկությունները, որոնք առնչվում են այդ Կողմի շուկայում վեճի Կողմերի պետությունների տարածքից ծագող ապրանքների մասնաբաժնի փոփոխություններին, ինչպես նաեւ՝ համապատասխան ապրանքների գների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները: Ընդ որում, այդ Կողմն իրավունք ունի չկատարելու շուկայի կամ գների հատուկ վերլուծություն, ինչպես նաեւ՝ չտրամադրելու այն տեղեկությունները, որոնք այն համարում է առետրային կամ պետական գաղտնիք:

4. Շահի լուրջ ոտնահարման առկայության փաստը չի կարող հաստատվել համապատասխան ժամանակահատվածի ընթացքում ստորեւ նշված հանգամանքներից որեւէ մեկի գոյության դեպքում.

1) շահերի լուրջ ոտնահարման փաստը պարզող Կողմի պետության տարածքից ապրանքն արտահանելու արգելքի կամ սահմանափակումների առկայությունը, կամ շահերի լուրջ ոտնահարման փաստը պարզող Կողմի պետության տարածքից ապրանքը երրորդ Կողմի պետության շուկա ներմուծելու արգելքի կամ սահմանափակումների առկայությունը,

2) այն Կողմի պետության լիազոր մարմնի որոշումը, որը ներմուծում է նույնանման ապրանք եւ ունի տվյալ ապրանքի գծով առետրի մենաշնորհի կամ իրականացնում է տվյալն ապրանքի պետական առետուր, ըստ որի ոչ առետրային պատճառներով շահերի լուրջ ոտնահարման փաստը պարզող Կողմի պետությունից ներմուծումը վերաուղղորդել այլ պետությունից ներմուծմամբ,

3) տարերային աղետները, գործադուլները, տրանսպորտի խափանումները կամ այլ ֆորս մաժորային իրավիճակներ, որոնք լուրջ բացասական ազդեցություն են ունենում շահերի լուրջ ոտնահարման փաստը պարզող Կողմի պետությունից արտահանելու համար նախատեսված ապրանքի արտադրության, որակի, քանակի կամ գնի վրա,

4) շահերի լուրջ ոտնահարման փաստը պարզող Կողմի պետությունից արտահանումը սահմանափակող պայմանավորվածությունների առկայությունը,

5) շահերի լուրջ ոտնահարման փաստը պարզող Կողմի պետությունից տվյալ ապրանքը արտահանելու հնարավորությունը կամավոր կերպով նվազեցնելը (ներառյալ այն իրավիճակը, երբ շահերի լուրջ ոտնահարման փաստը պարզող Կողմի պետության տնտեսվարող սուբյեկտները միակողմանիորեն համանման տվյալ ապրանքի արտահանումը ուղղել են դեպի նոր շուկաներ),

6) ապրանքը ներմուծող Կողմի պետությունում ընդունված չափանիշներին եւ (կամ) վարչական մյուս պահանջներին անհամապատասխանությունը :

5. Եթե բացակայում են 3-րդ կետում թվարկված հանգամանքները, ապա շահերի լուրջ ոտնահարման առկայությունը պարզվում է Հաշտեցման հանձնաժողովին ներկայացված տեղեկությունների, կամ այն տեղեկությունների հիման վրա, որոնք Հաշտեցման հանձնաժողովն ինքնուրույն է ձեռք բերել, կամ ԵվրԱզԷՍ-ի դատարան ներկայացված տեղեկությունների կամ այն տեղեկությունների հիման վրա, որոնք ԵվրԱզԷՍ-ի դատարանն ինքնուրույն է ձեռք բերել:

Հոդված 8

Լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի հաստատումը

1. Լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասը հաստատվում է լրավճարված ապրանքի ներմուծման ծավալի, այն Կողմի պետության շուկայում, որի իրավասու մարմինն իրականացնում է քննությունը, նույնանման ապրանքի գների վրա եւ նույնանման ապրանքի ազգային արտադրողների վրա այդ ներմուծման ազդեցության վերլուծության արդյունքների հիման վրա:

2. Լրավճարված ապրանքի ներմուծման ծավալը վերլուծելիս իրավասու մարմինը որոշում է, թե արդյոք ավելացել է լրավճարված ապրանքի ներմուծման ծավալը (բացարձակ ցուցանիշներով կամ այն Կողմի պետությունում նույնանման ապրանքի արտադրության կամ սպառման առնչությամբ, որի իրավասու մարմինն անց է կացնում քննությունը):

Քննություն անցկացնող Կողմի պետության շուկայում նույնանման ապրանքի գների վրա լրավճարված ապրանքի ներմուծման ազդեցությունը վերլուծելիս իրավասու մարմինը պարզում է.

թե արդյո՞ք լրավճարված ապրանքի գներն ավելի ցածր էին նույնանման ապրանքի գներից՝ քննություն իրականացնող Կողմի պետության շուկայում,

թե արդյո՞ք լրավճարված ապրանքի ներմուծումը հանգեցրել է նույնանման ապրանքի գների նվազեցմանը՝ քննություն իրականացնող Կողմի պետության շուկայում,

թե արդյո՞ք լրավճարված ապրանքի ներմուծումը խոչընդոտել է նույնանման ապրանքի գների աճը՝ քննություն իրականացնող Կողմի պետության շուկայում, ինչը տեղի կունենար այդպիսի ներմուծման բացակայության դեպքում:

3. Ազգային տնտեսության ճյուղի վրա լրավճարված ապրանքի ներմուծման ազդեցության վերլուծությունը ենթադրում է ազգային տնտեսության ճյուղի վիճակին առնչվող տնտեսական գործոնների գնահատում, այդ թվում՝

նույնանման ապրանքի արտադրության, վաճառքի, քննություն իրականացնող Կողմի պետության շուկայում դրա մասնաբաժնի, շահույթի, աշխատանքի արտադրողականության, ներգրավված ներդրումներից կամ արտադրական հզորությունների օգտագործումից ստացված եկամտի կրճատումը կամ ապագայում հնարավոր կրճատումը,

քննություն իրականացնող Կողմի պետության շուկայում նույնանման ապրանքի գների վրա ազդող գործոնները:

դրամական հոսքերի շարժի, նույնանման ապրանքի պաշարների, զբաղվածության մակարդակի, աշխատավարձի, արտադրության աճի տեմպերի, ներդրումներ ներգրավելու հնարավորության վրա բացասական ազդեցությունը կամ ապագայում հնարավոր բացասական ազդեցությունը:

4. Ազգային տնտեսության ճյուղի վրա լրավճարված ապրանքի ներմուծման ազդեցությունը գնահատվում է քննություն իրականացնող Կողմի պետությունում նույնանման ապրանքի արտադրության նկատմամբ, եթե առկա տվյալներով հնարավոր է առանձնացնել նույնանման ապրանքի արտադրությունն այնպիսի չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են արտադրական գործընթացը, ապրանքի վաճառքը դրա արտադրողների կողմից եւ շահույթը: Եթե առկա տվյալներով հնարավոր չէ առանձնացնել նույնանման ապրանքի արտադրությունը, ապա լրավճարված ապրանքի ներմուծման ազդեցությունը ազգային տնտեսության ճյուղի վրա գնահատվում է այն ապրանքների ամենանեղ խմբի կամ անվանացանկի արտադրության նկատմամբ, որոնք ներառում են նույնանման ապրանքը եւ որոնց վերաբերյալ առկա են անհրաժեշտ տվյալներ:

5. Լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի հաստատումը պետք է հիմնված լինի հարցին առնչվող եւ իրավասու մարմնի տրամադրության տակ գտնվող բոլոր ապացույցների եւ տվյալների վերլուծության վրա: Իրավասու մարմինն այդ թվում վերլուծում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման, մյուս Կողմերի պետություններից մատակարարումների դինամիկան եւ ազդեցությունը: Ընդ որում, լրավճարված ապրանքի ներմուծման ծավալը եւ ազգային տնտեսության ճյուղի վրա այդ ներմուծման ազդեցությունը վերլուծելու արդյունքում պարզված գործոններից ոչ մեկը եւ ոչ էլ մի քանիսը չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասը հաստատելու նպատակների համար: Իրավասու մարմինը, բացի լրավճարված ապրանքի ներմուծումից, վերլուծում է այլ հայտնի գործոններ, որոնց հետեւանքով միեւնույն ժամանակահատվածում ազգային տնտեսության ճյուղին վնաս է հասցվել: Ազգային տնտեսության ճյուղին հասցված այդ վնասը իրավասու մարմինը չի կարող որակել որպես լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնաս:

6. Լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի հաստատման դեպքում իրավասու մարմինը հաշվի է առնում առկա բոլոր գործոնները, այդ թվում՝ ստորեւ նշվածները՝

լրավճարի կամ լրավճարների բնույթը, չափը եւ առետրի վրա դրանց հնարավոր ազդեցությունը,

լրավճարված ապրանքի ներմուծման աճի տեմպերը, որոնք վկայում են այդ ներմուծման հետագա աճի իրական հնարավորության մասին,

լրավճար տրամադրած Կողմի պետությունում լրավճարված ապրանքն արտադրողների համար այնպիսի բավարար հնարավորությունների առկայությունը կամ դրանց ընդլայնման ակնհայտ անխուսափելիությունը, որոնք վկայում են լրավճարված ապրանքի ներմուծման ավելացման իրական հնարավորության մասին,

լրավճարված ապրանքի գների մակարդակը, եթե գների այդպիսի մակարդակը կարող է հանգեցնել նույնանման ապրանքի գնի նվազմանը կամ զսպմանը՝ քննություն իրականացնող Կողմի պետության շուկայում, ինչպես նաեւ լրավճարված ապրանքի պահանջարկի հետագա աճին,

լրավճարված ապրանքն արտադրողի մոտ եղած պաշարները:

Ընդ որում, սույն մասում նշված գործոններից ոչ մեկը եւ ոչ էլ մի քանիսը չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ լրավճարված ապրանքի ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգը հաստատելու նպատակների համար:

Ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասին որոշում ընդունվում է այն դեպքում, երբ սույն մասում նշված գործոնների վերլուծության արդյունքներով իրականացվող քննության ընթացքում իրավասու մարմինը հանգել է այն եզրակացության, որ լրավճարված ապրանքի ներմուծումը շարունակելը եւ այդ ներմուծման հետեւանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելն անխուսափելի են՝ փոխհատուցման միջոց չձեռնարկելու դեպքում:

Հոդված 9

Քննություն իրականացնելու ժամանակ հանդես եկող շահագրգիռ անձինք

1. Քննություն իրականացնելու ժամանակ շահագրգիռ անձինք կարող են համարվել՝

նույնանման ապրանքի ազգային արտադրողը, ազգային արտադրողների միավորումը, որի մասնակիցների մեծամասնությունը նույնանման ապրանքի արտադրող է,

քննության առարկա համարվող լրավճարված ապրանքի արտադրողը, քննության առարկա համարվող լրավճարված ապրանքի արտադրողների միավորումը, որի մասնակիցների մեծամասնությունը տվյալ ապրանքի արտադրող է,

լրավճարը տրամադրած Կողմը եւ (կամ) Կողմի պետության լիազոր մարմինը,

սպառողների հասարակական միավորումները, եթե տվյալ ապրանքն առավելապես ֆիզիկական անձանց կողմից սպառման առարկա է,

քննության առարկա համարվող լրավճարված ապրանքի սպառողները, եթե նրանք տվյալ ապրանքն օգտագործում են արտադրանքի արտադրության մեջ, եւ այդ սպառողների միավորումները:

2. Սույն Հոդվածի 1-ին մասում նշված շահագրգիռ անձինք քննության ընթացքում գործում են ինքնուրույն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով, որոնք ունեն պատշաճ կերպով ձեւակերպված լիազորություններ՝ քննություն իրականացնող Կողմի պետության օրենսդրության համաձայն:

Այն դեպքում, երբ քննության ընթացքում շահագրգիռ անձը գործում է լիազոր ներկայացուցչի միջոցով, իրավասու մարմինը շահագրգիռ անձին է փոխանցում քննության առարկայի մասին բոլոր տեղեկությունները միայն այդ ներկայացուցչի միջոցով:

Հոդված 10

Գաղտնի տեղեկությունները

1. Շահագրգիռ անձի կողմից իրավասու մարմին ներկայացված տեղեկություններն ուսումնասիրվում են որպես գաղտնի այն դեպքում, երբ տվյալ անձը ներկայացնում է այնպիսի հիմնավորումներ, որոնք վկայում են այն մասին, որ նման տեղեկությունների բացահայտման հետեւանքով մրցակցության պայմաններում առավելություն կընձեռվի երրորդ անձի, կամ դա կհանգեցնի բացասական հետեւանքների՝ տվյալ տեղեկությունները տրամադրած անձի կամ այն անձի համար, որից տվյալ անձը ստացել է այդ տեղեկությունները: Գաղտնի տեղեկությունները չպետք է հրապարակվեն առանց դրանք ներկայացրած շահագրգիռ անձի թույլտվության, բացառությամբ Կողմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Իրավասու մարմինը գաղտնի տեղեկություններ ներկայացրած շահագրգիռ անձից իրավունք ունի պահանջելու, որպեսզի նա ներկայացնի այդ տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը: Ոչ գաղտնի տարբերակը պետք է ներառի տվյալներ, որոնք բավարար են՝ ներկայացված գաղտնի տեղեկությունների էությունը հասկանալու համար: Այն դեպքերում, երբ գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը տրամադրելու մասին իրավասու մարմնի պահանջին ի պատասխան շահագրգիռ անձը հայտարարում է, որ գաղտնի տեղեկություններն այդ տարբերակով չեն կարող տրամադրվել, տվյալ անձը պետք է ներկայացնի ապացույցներ գաղտնի տեղեկություններն այդ տարբերակով ներկայացնելու անհնարինության մասին:

Եթե իրավասու մարմինը հաստատի, որ շահագրգիռ անձի կողմից ներկայացված հիմնավորումներով հնարավոր չէ ներկայացված տեղեկությունները որակել որպես գաղտնի, կամ եթե գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը չներկայացրած շահագրգիռ անձը չի ներկայացնում նաեւ գաղտնի տեղեկություններն այդ տարբերակով ներկայացնելու անհնարինության հիմնավորում կամ ներկայացնում է այնպիսի տվյալներ, որոնք չեն համարվում գաղտնի տեղեկություններն այդ տարբերակով ներկայացնելու անհնարինության հիմնավորում, ապա իրավասու մարմինը կարող է հաշվի չառնել այդ տեղեկությունները:

2. Իրավասու մարմինը գաղտնի տեղեկությունների հրապարակման համար կրում է պատասխանատվություն՝ նախատեսված քննություն իրականացնող Կողմի պետության օրենսդրությամբ:

«Արդյունաբերական լրավճարների տրամադրման միասնական կանոնների մասին» համաձայնագրի

ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Մաս 1

Կողմերն իրավասու են դիմելու Մաքսային միության Հանձնաժողով առանձնահատուկ լրավճար տրամադրելու համար թույլտվություն ստանալու նպատակով:

Կողմերը չեն կիրառում փոխհատուցման միջոցներ այն լրավճարների դեպքում, որոնք տրամադրվում են Մաքսային միության Հանձնաժողովի կողմից թույլատրված ժամկետով, պայմաններով եւ ծավալներով:

Մաս 2

Ռուսաստանի Դաշնություն

Միջոցի նկարագիրը	Անցումային ժամանակահատվածի¹³ տեսողությունը՝ միջոցի առնչությամբ
1. Մինչեւ 2011 թվականի փետրվարի 28-ը կնքված ներդրումային համաձայնագրերի առնչությամբ կիրառվող միջոցները, որոնք ներառում են դրույթներ՝ սահմանված «Հայրենական ավտոմոբիլային արդյունաբերության զարգացման համար ներդրումներ ներգրավելու նպատակով լրացուցիչ միջոցների մասին» Ռուսաստանի Դաշնության նախագահի 1998 թվականի փետրվարի 5-ի թիվ 135 հրամանագրով, «Հայրենական ավտոմոբիլային արդյունաբերության զարգացման համար ներդրումներ ներգրավելու նպատակով	Համաձայնագրերի գործողության ժամկետը՝ դրանց ստորագրման ժամանակ սահմանված, եւ այն ժամկետով երկարաձգելու հնարավորությունը, որը նախատեսված է Առետրի համաշխարհային կազմակերպությանը

¹³ Անցումային ժամանակահատվածի տեսողությունը նշանակում է ժամանակի այն հատվածը, որի ընթացքում սույն Համաձայնագրի նորմերը չեն գործում:

<p>լրացուցիչ միջոցների մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության 1998 թվականի ապրիլի 23-ի թիվ 413 որոշմամբ, «Արդյունաբերական հավաքման համար ներմուծվող ավտոմեքենաների մասերի առնչությամբ Ռուսաստանի Դաշնության մաքսային սակագնի փոփոխության մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի թիվ 166 որոշմամբ, «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Մաքսային միության միասնական մաքսային սակագնային կարգավորման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշմամբ</p>	<p>Ռուսաստանի Դաշնության միանալու մասին Արձանագրության մեջ, եւ որը, սակայն, չի գերազանցում երկու օրացուցային տարին</p>
<p>2. «Կալինինգրադի մարզում հատուկ տնտեսական գոտու մասին» 1996 թվականի հունվարի 22-ի թիվ 13-Փ3 դաշնային օրենքի համաձայն կիրառվող միջոցներ</p>	<p>մինչեւ 2016 թվականի ապրիլի 1-ը</p>
<p>3. «Մագադանի մարզում հատուկ տնտեսական գոտու մասին» 1999 թվականի մայիսի 31-ի թիվ 104-Փ3 դաշնային օրենքի համաձայն կիրառվող միջոցներ</p>	<p>մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը</p>

Ղազախստանի Հանրապետություն

<p>Միջոցի նկարագիրը</p>	<p>Անցումային ժամանակահատվածի տեւողությունը՝ միջոցի առնչությամբ</p>
<p>Արտահանմանը նպատակաուղղված արտադրության համար բանկային վարկերի տոկոսադրույքների դիմաց լրավճարի տրամադրումը՝ «2020 թվականի ձեռնարկատիրության ճանապարհային քարտեզ» ծրագիրը հաստատելու մասին» Ղազախստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 301 որոշման համաձայն</p>	<p>մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը՝ այն վարկերի համար, որոնք տրամադրվել են վարկային կազմակերպությունների կողմից մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը</p>
<p>Բավարար վերամշակման չափանիշների համաձայն դազախական ճանաչված ապրանքների ազատումը մաքսատուրքերից եւ հարկերից՝ «Ազատ պահեստ» մաքսային ռեժիմից Մաքսային միության տարածք արտահանելիս՝ «Ղազախստանի Հանրապետությունում մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 30-ի օրենսգրքին, «Բյուջե մուտքագրվող հարկերի եւ պարտադիր վճարների մասին» (Հարկային օրենսգիրք) Ղազախստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 99-Ո օրենքին, «Ապրանքի ծագման երկիրը որոշելու, ապրանքի ծագման վերաբերյալ փորձաքննության ակտ կազմելու ու տրամադրելու եւ</p>	<p>մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ը</p>

<p>ապրանքի ծագման մասին հավաստագիր ձեւակերպելու, հաստատելու եւ տրամադրելու կանոնները հաստատելու մասին» Ղազախստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1647 որոշմանը, «Ազատ մաքսային պահեստների եւ ազատ մաքսային պահեստի մաքսային ընթացակարգի մասին» Բելառուսի Հանրապետության Կառավարության, Ղազախստանի Հանրապետության Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ կնքված 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին համապատասխան</p>	
<p>Բավարար վերամշակման չափանիշների համաձայն դազախական ճանաչված ապրանքների ազատումը մաքսատուրքերից եւ հարկերից՝ հատուկ տնտեսական գոտիների տարածքից Մաքսային միության մաքսային տարածք արտահանելիս՝ «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիներին եւ ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգին առնչվող հարցերի մասին» Բելառուսի Հանրապետության Կառավարության, Ղազախստանի Հանրապետության Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ կնքված 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին, «Ղազախստանի Հանրապետությունում հատուկ տնտեսական գոտիների մասին» Ղազախստանի Հանրապետության 2007 թվականի հուլիսի 6-ի օրենքին, «Ղազախստանի Հանրապետությունում մաքսային գործի մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 30-ի օրենսգրքին, «Ապրանքի ծագման երկիրը որոշելու, ապրանքի ծագման վերաբերյալ փորձաքննության ակտ կազմելու ու տրամադրելու եւ ապրանքի ծագման մասին հավաստագիր ձեւակերպելու, հաստատելու եւ տրամադրելու կանոնները հաստատելու մասին» Ղազախստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1647 որոշմանը համապատասխան</p>	<p>մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ը</p>

«Արդյունաբերական լրավճարների
տրամադրման միասնական կանոնների
մասին» համաձայնագրի

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՀԻՄՔ ՉԷ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1) այնպիսի հետազոտական գործունեության համար տրամադրվող օգնություն¹⁴, որն իրականացվում է ընկերությունների, ինչպես նաև՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ գիտական կազմակերպությունների կողմից՝ ընկերությունների հետ պայմանագրային հիմունքներով, պայմանով, որ այդ օգնությունը ծածկում է¹⁵ արդյունաբերական հետազոտությունների արժեքի 75%-ից ոչ ավելին¹⁶ կամ նախամրցակցային փուլում մշակումների արժեքի 50%-ից ոչ ավելին^{17, 18},

¹⁴ Սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվում հիմնարար գիտական այն հետազոտությունների դեպքում, որոնք անկախ կերպով իրականացվում են բարձրագույն ուսումնական կամ գիտական հաստատությունների կողմից: «Հիմնարար հետազոտություններ» տերմինը նշանակում է ընդհանուր գիտական եւ տեխնիկական այն գիտելիքների ընդլայնումը, որոնք կապված չեն արդյունաբերական կամ առևտրային նպատակների հետ:

¹⁵ Օգնության թույլատրելի մակարդակը, որը սույն ենթակետում նշված միջոցներն ընդունելու հիմք չի ծառայում, սահմանվում է համապատասխան այն ծախսերի ընդհանուր գումարի համար, որոնք կատարվել են որոշակի նախագծի իրականացման ժամանակահատվածում:

¹⁶ «Արդյունաբերական հետազոտություններ» տերմինը նշանակում է ծրագրված հետազոտություններ կամ կարեւորագույն հետազոտություններ՝ նպատակաուղղված նոր գիտելիքների բացահայտմանն այն նկատառումով, որ այդ գիտելիքները կարող են օգտակար լինել նոր ապրանքներ, գործընթացներ կամ ծառայություններ մշակելիս, ինչպես նաև՝ գոյություն ունեցող ապրանքների, գործընթացների կամ ծառայությունների զգալի բարելավման համար:

¹⁷ «Նախամրցակցային փուլում մշակումներ» տերմինը նշանակում է , որ արդյունաբերական հետազոտությունների արդյունքների հիման վրա կազմվում են նախագծեր, գծագրեր կամ մանրակերտներ վաճառքի կամ օգտագործման համար նախատեսված նոր, ձեւափոխված կամ բարելավված ապրանքների, տեխնոլոգիական գործընթացների կամ ծառայությունների համար, այդ թվում՝ առևտրային նպատակներով օգտագործման համար ոչ պիտանի առաջին նախատիպի ստեղծումը: Այն կարող է ներառել նաև այլընտրանքային ապրանքների, եղանակների կամ

եւ պայմանով, որ այն տրամադրվում է՝ բացառապես հետեւյալ ծախսերը ծածկելու համար.

ա) անձնակազմի հետ կապված ծախսերը (հետազոտողներ, տեխնիկական աշխատողներ եւ այլ օժանդակ աշխատողներ, որոնք զբաղվում են բացառապես հետազոտական գործունեությամբ),

բ) այն գործիքների, սարքավորումների, հողի եւ կառույցների հետ կապված ծախսերը, որոնք բացառապես եւ մշտապես օգտագործվում են (բացառությամբ առետրային հիմքով վաճառքի դեպքի) հետազոտական գործունեության համար,

գ) այն խորհրդատվական եւ համարժեք այլ ծառայությունների հետ կապված ծախսերը, որոնք օգտագործվում են բացառապես հետազոտական գործունեության համար՝ ներառյալ գիտական հետազոտությունների արդյունքները, տեխնիկական գիտելիքները, արտոնագրերը եւ մյուս միջոցները գնելը,

դ) հավելյալ վերադիր ծախսերը, որոնք կատարվել են ուղղակիորեն հետազոտական գործունեության հետեւանքով,

ե) մյուս ընթացիկ ծախսերը (նյութերի, ապահովման եւ այլնի հետ կապված), որոնք կատարվել են ուղղակիորեն հետազոտական գործունեության հետեւանքով,

2) այն օգնությունը Կողմի պետության տարածքում գտնվող ոչ բարեկեցիկ շրջաններին, որը տրամադրվում է տարածքային զարգացման ընդհանուր շրջանակներում¹⁹, չի համարվում

ծառայությունների հայեցակարգի մշակումը եւ դիզայնը, ինչպես նաեւ՝ նախնական ցուցադրական կամ փորձնական ծրագրերը, պայմանով, որ դրանք չեն կարող հարմարեցվել կամ օգտագործվել արդյունաբերական կիրառման կամ առետրային շահագործման նպատակներով: Այն չի վերաբերում գոյություն ունեցող ապրանքների, արտադրական գծերի, մշակման գործընթացների, ծառայությունների եւ մյուս սովորական գործողությունների ընթացիկ եւ պարբերական փոփոխություններին, նույնիսկ, եթե այդ փոփոխությունները հանգեցնում են բարելավումների:

¹⁸ Արդյունաբերական հետազոտություններն ու նախամրցակցային մշակումները միավորող ծրագրերի դեպքում օգնության թույլատրելի մակարդակը, որը միջոցներ ընդունելու հիմք չի ծառայում, չպետք է լինի այդ երկու կատեգորիաների համար թույլատրելի մակարդակների պարզ միջինից բարձր, որը հաշվարկվում է՝ նկատի ունենալով սույն ենթակետի «i»- «v» կետերում նշված համապատասխան բոլոր ծախսերը:

¹⁹ «Տարածքային զարգացման ընդհանուր շրջանակներ» նշանակում է, որ շրջաններում լրավճարների տրամադրման ծրագրերը կազմում են տարածքային զարգացման՝ ներքին հետետղական եւ համընդհանուր կիրառելի քաղաքականության մի մաս, եւ որ շրջանների զարգացման համար լրավճարները չեն տրամադրվում առանձին աշխարհագրական կետերի, որոնք շրջանի զարգացման վրա որեւէ ազդեցություն չեն ունենում կամ գրեթե չեն ունենում:

առանձնահատուկ (սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի իմաստով) եւ բաշխվում է համապատասխան շրջանների միջեւ՝ պայմանով, որ.

ա) ոչ բարեկեցիկ յուրաքանչյուր շրջան պետք է լինի հստակ կերպով սահմանազատված պարփակ վարչական եւ տնտեսական գոտի,

բ) այդ շրջանը դիտարկվում է որպես ոչ բարեկեցիկ՝ չեզոք եւ օբյեկտիվ այնպիսի չափորոշիչների²⁰ հիման վրա, որոնք վկայում են այն մասին, որ շրջանի դժվարությունները առաջանում են ոչ միայն ժամանակավոր հանգամանքների պատճառով. այդ չափորոշիչները պետք է հստակ կերպով սահմանվեն օրենքներում, կանոններում կամ այլ պաշտոնական փաստաթղթերում այնպես, որ դրանք հնարավոր լինի ստուգել,

գ) չափորոշիչները ներառում են տնտեսական զարգացման գնահատումը, որը հիմնված է հետեւյալ ցուցանիշներից առնվազն մեկի վրա՝

բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտը կամ տնային տնտեսության հաշվով եկամուտը, կամ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը, որը չպետք է գերազանցի տվյալ տարածքի համար միջին ցուցանիշի 85%-ը,

գործազրկության մակարդակը, որը պետք է կազմի տվյալ տարածքի համար միջին ցուցանիշի առնվազն 110%-ը,

հաշվարկված եռամյա ժամանակահատվածի համար. այդպիսի հաշվարկը, թերեւս, կարող է լինել բարդ, եւ դրանում կարող են հաշվի առնվել այլ գործոններ,

²⁰ «Չեզոք եւ օբյեկտիվ չափորոշիչներ» նշանակում է չափորոշիչներ, որոնց միջոցով որոշակի շրջանների չեն տրվում ավելի մեծ արտոնություններ, քան անհրաժեշտ է տարածքային զարգացման քաղաքականության շրջանակներում շրջանների միջեւ տարբերությունները վերացնելու կամ նվազեցնելու համար: Այս առումով շրջաններում լրավճարների տրամադրման ծրագրերում պետք է ներառվեն օգնության առավելագույն գումարներ, որոնք կարող են տրամադրվել լրավճար ստացող յուրաքանչյուր նախագծի համար: Այդ առավելագույն գումարները պետք է լինեն տարբերակված՝ ելնելով այն շրջանների զարգացման մակարդակից, որոնց ցուցաբերվում է օգնությունը, եւ արտահայտված ներդրումների նպատակով կատարվող ծախսերի կամ աշխատատեղերի ստեղծման համար կատարվող ծախսերի տեսքով: Այդ գումարների սահմաններում օգնությունը պետք է բաշխվի բավականաչափ ընդլայնված կերպով՝ լրավճարների արտոնյալ օգտագործումից կամ որոշ ձեռնարկությունների անհամաչափորեն մեծ գումարներ տրամադրելուց խուսափելու համար, ինչպես նախատեսված է 3-րդ հոդվածում:

3) աջակցություն՝ գոյություն ունեցող արտադրական հզորությունները²¹ շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող այն նոր պահանջներին համապատասխանեցնելու գործում, որոնք նախատեսված են այն օրենսդրությամբ եւ (կամ) նորմատիվ ակտերով, որոնք ընկերությունների համար ենթադրում են լրացուցիչ սահմանափակումներ եւ ֆինանսական բեռի մեծացում, պայմանով, որ այդ աջակցությունը.

ա) միանգամյա, չկրկնվող միջոց է եւ

բ) կազմում է համապատասխանեցման հետ կապված ծախսերի 20%-ից ոչ ավելին, եւ

գ) չի ծածկում լրավճարված սարքավորման փոխարինման եւ շահագործման հետ կապված ծախսերը, որոնք ամբողջությամբ պետք է կատարեն ձեռնարկությունները, եւ

դ) անմիջականորեն եւ համամասնորեն կապված է ընկերության կողմից աղտոտման ծրագրվող կրճատման հետ եւ չի ծածկում արտադրական ծախսերի այն խնայողությունը, որին կարելի է հասնել, եւ

ե) հասանելի է բոլոր այն ընկերությունների համար, որոնք կարող են անցում կատարել նոր սարքավորումների եւ (կամ) արտադրական գործընթացների:

²¹ «Գոյություն ունեցող արտադրական հզորություններ» տերմինը նշանակում է այն արտադրական հզորությունները, որոնք շահագործման մեջ են գտնվել առնվազն երկու տարվա ընթացքում՝ նախքան շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող նոր պահանջներ սահմանելը:

«Արդյունաբերական լրավճարների
տրամադրման միասնական կանոնների
մասին» համաձայնագրի

ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՁԵՎԱԶԱՓԵՐԸ

Ծանուցումը լրացնելու ցուցումներ

1. Լրավճարի տրամադրման ծրագրի անվանումը՝ դրա առկայության դեպքում, լրավճարի համառոտ նկարագիրը կամ դրա մասին նշում, օրինակ՝ «Փոքր ձեռնարկատիրության զարգացում»: Լրավճարի ծրագրի անվանումը կարող է նաեւ համընկնել այն օրենսդրական կամ նորմատիվ ակտի անվանման հետ, որի համաձայն տրամադրվում է լրավճարը:

2. Ծանուցման մեջ նշված ժամանակահատվածը:

3. Լրավճարի հիմնական նշանակությունը եւ (կամ) նպատակը: Լրավճարի տրամադրման նպատակին վերաբերող տվյալներ սովորաբար կարելի է գտնել այն նորմատիվ իրավական ակտի մեջ, որի համաձայն տրամադրվում է լրավճարը:

4. Լրավճարի տրամադրման իրավական հիմքը Սույն բաժնում անհրաժեշտ է նշել այն նորմատիվ իրավական ակտի անվանումը, որի համաձայն տրամադրվում է լրավճարը, ինչպես նաեւ՝ տվյալ ակտի համառոտ նկարագիրը:

5. Լրավճարի ձեւը (այսինքն՝ դրամաշնորհ, փոխառություն, հարկային արտոնություն եւ այլն):

6. Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը (արտադրողներին, արտահանողներին կամ այլ անձանց): Նկարագրել, թե ինչ միջոցների օգնությամբ է տրամադրվում լրավճարը. ապրանքի միավորի համար՝ սահմանված կամ փոփոխվող գումարով. երկրորդ տարբերակի դեպքում՝ անհրաժեշտ է հստակեցնել գումարը որոշելու մեխանիզմը: Նկարագրել լրավճար տրամադրելու մեխանիզմն ու պայմանները:

7. Լրավճարների չափը: Արտադրանքի միավորի համար լրավճարը կամ այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, տվյալ լրավճարի համար հատկացված տարեկան կամ ընդհանուր

գումարը (նշելով նախորդ տարվա ընթացքում արտադրանքի միավորի համար լրավճարի միջին դրույքաչափը): Այն դեպքում, երբ արտադրանքի միավորի համար լրավճարի մասին տեղեկություններ (ծանուցման մեջ նշված տարվա համար, նախորդող տարվա համար կամ այդ երկու տարիների համար) չեն կարող ներկայացվել, անհրաժեշտ է ներկայացնել լիարժեք բացատրություն:

8. Լրավճարի գործողության տեսողությունը եւ (կամ) լրավճարի համար կիրառելի ժամանակային ցանկացած այլ սահմանափակում՝ ներառյալ լրավճարը տրամադրելու (տրամադրումը դադարեցնելու) ամսաթիվը:

9. Առետրի վրա ազդեցության մասին տվյալներ: Վիճակագրական տվյալներ, որոնք թույլ են տալիս գնահատել լրավճարի ազդեցությունը առետրի վրա: Հնարավորության դեպքում անհրաժեշտ է, որ տեղեկությունները ներառեն վիճակագրական տվյալներ լրավճարված ապրանքների կամ ոլորտների արտադրության, սպառման, ներմուծման եւ արտահանման մասին՝

ա) վերջին երեք տարիների համար, որոնց վերաբերյալ առկա են վիճակագրական տվյալներ,

բ) նախորդ տարվա համար՝ լրավճարի սահմանմանը նախորդող վերջին տարին կամ լրավճարի վերջին կարելու փոփոխությանը նախորդող տարին:

Աղյուսակ 1²²

Ծանուցման ընդհանուր ձեւաչափը

Լրավճարի տրամադրման ծրագրի անվանումը	Ժամանակահատվածը, որի համար տրամադրվում են տվյալները	Լրավճարի տրամադրման նպատակը	Լրավճարի տրամադրման հիմքերը	Լրավճարի տրամադրման ձեւի նկարագիրը	Ու՛մ եւ ինչպե՛ս է Տրամադրվում լրավճարը	Լրավճարի չափը	Լրավճարի տրամադրման տեսողությունը	Առետրի վրա ունեցած ազդեցության մասին տվյալները
1	2	3	4	5	6	7	8	9

Աղյուսակ 2

Լրավճարների ձեւը՝ դրամաշնորհի

Լրավճարի տրամադրման ծրագրի անվանումը,	Ժամանակահատվածը, որի համար տրամադրվում են տվյալները	Լրավճարի տրամադրման նպատակը	Լրավճարի տրամադրման հիմքերը	Ու՛մ եւ ինչպե՛ս է Տրամադրվում Լրավճարը	Դրամաշնորհի Գումարը	Լրավճարի տրամադրման տեսողությունը	Լրացուցիչ տեղեկությունները
1	2	3	4	5	6	7	8

5. **Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը:** Սույն բաժնում անհրաժեշտ է նշել դրամաշնորհին ստացողին եւ բավականին մանրամասն նկարագրել այն տրամադրելու մեխանիզմն ու պայմանները, մասնավորապես՝ ո՞ր մարմինն է անմիջականորեն որոշում կայացնում լրավճար

²² Կիրառվում է այն ժամանակ, երբ մյուս աղյուսակներում ներկայացված մյուս ձեւաչափերը չեն կարող կիրառվել:

տրամադրելու մասին եւ տրամադրում լրավճար, ինչ պայմանների բավարարման դեպքում է տրամադրվում լրավճար, ինչի՞ց է կախված եւ ինչպես է որոշվում տրամադրվող լրավճարի չափը:

Աղյուսակ 3

Լրավճարների ձեւը՝ արտոնյալ պայմաններով վարկ

Լրավճարի տրամադրման ծրագրի անվանումը,	Ժամանակահատվածը, որի համար տրամադրվում են տվյալները	Լրավճարի տրամադրման նպատակը	Լրավճարի տրամադրման հիմքերը	Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը	Վարկի գումարը	Տոկոսա դրույքը	Լրավճարի տրամադրման տեսողությունը	Լրացուցիչ Տեղեկությունները
1	2	3	4	5	6	7	8	9

5. **Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը:** Սույն բաժնում անհրաժեշտ է նշել վարկն ստացողին եւ բավականին մանրամասն նկարագրել այն տրամադրելու մեխանիզմն ու պայմանները, մասնավորապես՝ ո՞ր մարմինն է անմիջականորեն որոշում կայացնում լրավճար տրամադրելու մասին եւ տրամադրում լրավճար, ինչ պայմանների բավարարման դեպքում է տրամադրվում լրավճար, ինչի՞ց է կախված եւ ինչպես է որոշվում տրամադրվող լրավճարի չափը: Եթե ֆինանսավորման ժամանակ սուբյեկտները բաժանվում են կատեգորիաների (օրինակ՝ ըստ ճյուղերի), ապա յուրաքանչյուր կատեգորիան անհրաժեշտ է առանձին նշել:

6. **Վարկի գումարը:** Սույն բաժնում նշվում է հաշվետու ժամանակահատվածի համար փաստացի տրամադրված վարկի գումարը:

7. **Տոկոսադրույքը:** Անհրաժեշտ է նշել տրամադրվող վարկերի տոկոսադրույքը: Եթե տրամադրվել է մի քանի վարկ՝ տարբեր տոկոսադրույքներով, ապա անհրաժեշտ է ներկայացնել տվյալներ յուրաքանչյուրի վերաբերյալ: Այս տեղեկություններն անհրաժեշտ են լրավճարների չափը հաշվարկելու համար:

Աղյուսակ 4

Լրավճարների ձեւը՝ հարկային եւ մաքսային արտոնություններ

Լրավճարների տրամադրման ծրագրի անվանումը	Ժամանակահատվա ծը, որի համար տրամադրվում են տվյալները	Լրավճարի տրամադրման նպատակը (խնդիրները)	Լրավճարի տրամադրման հիմքերը	Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը	Լրավճարն երի ձեւը	Լրավճարի տրամադրման տեսողությունը	Լրավճարն երի չափը	Լրացուցիչ տեղեկությունները
1	2	3	4	5	6	7	8	9

5. **Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը:** Սույն բաժնում անհրաժեշտ է նշել այն սուբյեկտներին, որոնց տրամադրվում են հարկային արտոնություններ, կամ կատարել հղում այն օրենսդրական կամ նորմատիվ ակտին, որով որոշվում են այդ սուբյեկտները, ինչպես նաեւ՝ նշել, թե ինչ պայմաններով են այդ սուբյեկտներն ստանում արտոնություններ:

6. **Լրավճարների ձեւը:** Նշել տրամադրվող հարկային արտոնության ձեւը, օրինակ՝ հողի հարկից, ԱԱՀ-ից եւ այլ հարկերից ազատումը: Եթե նվազեցվել է հարկի չափը, ապա անհրաժեշտ է նշել հարկի դրույքաչափը կամ չափը:

8. **Լրավճարների չափը:** Նշել հաշվետու ժամանակահատվածի համար տրամադրվող լրավճարի չափը:

Աղյուսակ 5

Լրավճարների ձեւը՝ ապրանքների կամ ծառայությունների վաճառք՝ արտոնյալ պայմաններով

Լրավճարի տրամադրման ծրագրի անվանումը	Ժամանակահատվածը, որի համար տրամադրվում են տվյալները	Լրավճարի տրամադրման նպատակը (խնդիրները)	Լրավճարի տրամադրման հիմքերը	Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը	Լրավճարների ձեւը	Լրավճարների չափը	Լրավճարների ծավալը	Ապրանքի (ծառայության) գինը (սակագինը)՝ հաշվի չառնելով արտոնությունները	Լրավճարի տրամադրման տեսողությունը	Լրացուցիչ Տեղեկությունները
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

5. **Ու՛մ եւ ինչպե՛ս է տրամադրվում լրավճարը:** Սույն բաժնում անհրաժեշտ է նշել ապրանքները կամ ծառայություններն արտոնյալ պայմաններով գնող սուբյեկտներին, եւ նշել, թե ինչ պայմաններով են այդ սուբյեկտներն ստանում արտոնություններ: Նաեւ՝ տրամադրել տեղեկություններ այն մասին, թե ապրանքի կամ ծառայության որ տեսակի վաճառքի համար է տրամադրվում լրավճար: Օրինակ՝ էլեկտրաէներգիայի մատակարարում:

6. **Լրավճարների ձեւը:** Անհրաժեշտ է նշել, թե ինչ ձեւով է տրամադրվում լրավճարը: Օրինակ՝ սակագների, գների նվազեցում:

7. **Լրավճարների չափը:** Նշվում է հաշվետու ժամանակահատվածի համար լրավճարի գումարը՝ դրամային արտահայտությամբ:

8. **Լրավճարների ծավալը:** Նշվում է լրավճարների ծավալը՝ չափման միավորով (տոննա, վատտ եւ այլն):

